



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

P. O. Stillwater

My dear Mother
I am well

37

A-44

MAR 2010

«ՀԱՐԿԵՐ»-Ի ՄԱՆԿԱԳՐԹԵԿՆԵՆ ԳՐԱԳԵՐՆԵՆ

370
2484-Ֆե

V

Բ. Օ. ՏԵՍՏԵՆԿՈ

ՊԱՐԳԵԻՆՆԵՐՆ ԵՒ ՊԱՏԻԺՆԵՐԸ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ

1004
16063



«Հարկաւոր չեն պարգևներ և
կրթութիւնը, եթէ միայն կրթա-
կան» - պատկարակչական գործը
կենդանութիւնը է դրամ: ԲԵՆԵԿԷ

Գրագր. Մ.



ԹԻՖԼԻՍ
Տպարան «Հերմէս» Մաղաթեան փողոց № 5.
1906 (215)

I.

Ընդհանրապէս պարզկենցիկից և պատիժներից առաջացած ֆրաստ-կար հետեանքներն դաստիարակութեան մէջ:

Ժամանակակից ուսումնարանում և ընտանիքում պարզկենցիկներն և պատիժները մանկութեան անխուսափելի ուղեկիցներ են: Իւրաքանչիւր ծնող իր զաւակներին կամ պատժում է, կամ պարզկատրում: Ուսումնարանն էլ հետևում է ուսուցման և դաստիարակութեան նոյն այդ մեթոդին—պարզկենցիկ սակաւ են գործադրւում, իսկ աւելի յաճախ պատիժներ են հրամցւում մատաղ սերնդին... Եւ պէտք է ասել, որ թէ ծնողները, թէ ուսումնարանն այդպէս վարւում են աչքի տուած ունենալով միայն երեխաների բարօրութիւնը, միայն նրանց օգուտն և ապագայ երջանկութիւնը...

Փորձեցէք այդ առթիւ խօսել հայրերի կամ մայրերի հետ, փորձեցէք համոզել նրանց, թէ երեխաների ուսման և դաստիարակութեան գործում կարելի է չը դիմել պարզկենցիկին և պատիժներին, և ձեզ անպատճառ կասեն, որ դա չափազանց դժւար է, որ առանց պատիժների էլի մի կերպ կարելի է եօլա գնալ, սակայն առանց պարզկենցիկի—երբէք ոչ: Ոսեսցէք նոյն հարցի մասին մի հմուտ գործնական մանկավարժի

հետ և նա էլ կը պատասխանի ձեզ, որ ընդհակառակը՝ առանց պարզեների կարելի է մի կերպ կառավարել, սակայն առանց պատժի— ո՛չ... Ծնողները յանուն որդիական սիրոյ պատրաստ են հրաժարել պատիժներից, գործնական մանկավարժները յանուն դիպցիպլինի և կարգապահութեան պաշտպան են կանգնում պատիժների և՛ իբրև բացառութիւն, պատրաստ են ձեռք վերցնել պարզեններից. իսկ միանգամայն հրաժարել երկուսիցն էլ կտրականապէս չեն կամենում ո՛չ ծնողներն, ո՛չ էլ մանկավարժները:

Մինչդեռ, իրօք, պարզեններն և պատիժները սրբան փաստւած են երեխաների կանոնաւոր ուսուցման և դաստիարակութեան գործին, սրչափ աղջատուած են մանկական բնաւորութիւնը, սրբան վիշտ, սրբան աւախորժութիւններ են բերում հէնց իրենց ծնողներին: Ծնողները, առատօրէն շոայլելով պարզեններն և պատիժները, համոզւած են, որ դրանով հանում են ցանկալի նպատակին— երեխաներին դարձնում են հնազանդ ու խոնարհ, նրանց մէջ առաջ են բերում աշխատասիրութիւն, ոչնչացնում են ծուլութիւնը, զարգացնում են ուշիմութիւն, սովորեցնում են ճշմարտասիրութիւն, քաղաքավարութիւն և այլն, և այլն. այն ինչ, իսկապէս, հէնց նոյն պարզեններով ու պատիժներով ծնողները երեխաների մէջ պատւաստում են այնպիսի թերութիւններ և նոյն իսկ արատներ, որ յաճախ ընդ մէջ խեղդում են ամեն տեսակ բարի սաղմեր:— Դեռ 1870 թ., նկարագրելով մի շարք դէպքեր, երբ ծնողները ամեն տեսակ արարքների համար պատժում են

եղել իրենց զաւակներին, մի հեղինակ բոլորովին անսպասելի կերպով դիմում է ընթերցողին հետեւալ հարցով. «չը գիտէք արդեօք, թէ իսկապէս ի՞նչու էին ծնողները երեխաներին պատժում...» Այդ հարցին նոյն հեղինակն այսպիսի պատասխան է տալիս. «բոլոր այն արատների և տգեղ սովորութիւնների համար, որ երեխայի մէջ առաջացրել և զարգացրել էին հէնց իրենք ծնողներն և դաստիարակները...» Սրանից խելօք պատասխան էլ չես գտնի: Երեխան, օրինակի համար, արդէն զարթնել է, բայց որևէ պատճառով չի ուզում հագնւել, լողանալ կամ իրեն առաջարկւած ուտելիքն ուտել, չի ուզում հագնել իրան առաջարկւած հագուստը, չի կամենում լաւ եղանակին դրօսանքի գնալ, իսկ վատ եղանակին յամառբար պահանջում է ըզբօսնելու տանել և այլն, և այլն: Մայրն սկսում է թախանձել— երեխան մերժում է. մայրն սկսում է պնդել, սակայն երեխան դարձեալ մերժում է: Ի՞նչ անել: Իսկոյն հանդէս է գալիս կամ պատժի սպառնանք, կամ հրապուրում պարզեններով: Եթէ երեխան շարուկում է յամառել— պատիժը գործադրւում է, հակառակ դէպքում՝ նրան փոխարինում է պարգևը: Երեխան ըստ երևոյթին հնազանդւում է և մօր ցանկալի նպատակը կատարում... Սակայն աւանդ, ոչ երկար ժամանակով: Շուտով տեղի է ունենում մի նոր անհնազանդութիւն, մի նոր յամառութիւն, և նորից ասպարէզ է քաշում պարզեն ու պատիժը:

Ուրեմն սրտեղ և ի՞նչի մէջ պէտք է փնտրենք երեխայի ալգօրինակ անհնազանդութեան կամ յամա-

նութեան անդրեր-պատճառը... Դա չափազանց պարզ է և հասարակ: Սկզբում, երբ երեխան դեռ ևս շատ փոքր էր, ծնողները զարձանում էին նրա յամառութեամբ, երես էին տալիս նրան, իսկ յետոյ, երբ այդ բոլորը փոխեց բացայայտ, յամառանհաղանդութեան, նրանք յուսահատեցին, սկսեցին կամ պատժել, կամ պարզևատրել նոյն երեխային: Միթէ իրաւացի չէր վերոյիշեալ հեղինակը, երբ ընթերցողի փոխարէն պատասխանեց, որ ծնողներն պատժում են իրենց երեխաներին այն արատների և վատ յակութիւնների համար, որ հէնց իրենք են զարգացրել երեխաների մէջ:

Մայրերը նոյնպիսի վերաբերմունք են ցոյց տալիս դէպի երեխաները նաև դասատուութեան ժամանակ: Երեխան ծուլանում է, իրեն տւած դասերը կատարում է անհոգ և անուշադիր կերպով, խոյս է տալիս աշխատանքներից: Ծնողներն երեխային պատժում են... և այս բոլորը յանկարծ փոխում է, հէնց որ ծնողները պարապմունքների մէջ մտցնում են պատիժներ կամ պարգևներ... Ի՞նչ մտգական ներգործութիւն, կը բացականչի մայրը: Երեխան միանգամից, բոպէսպէս հպատակում է ծնողների պահանջներին, և նրանց բողձանքը լի ու լի կատարում է արդէն: Սակայն ի՞նչ գնով: Հարկադրումով, բռնութիւնով, որոշ օգուտ ձեռք բերելու հրապոյրով... Իսկ ի՞նչ է ծնողների շարունակարար և անընդհատ գործադրած պատիժների և պարգևների սիստեմի հետեանքը: Խոշոր վնաս երեխայի առողջութեան, կեանքի և ընդհանուր հոգեկան զարգացման համար:

Իւրաքանչիւր մի պատիժ, եթէ նա որևէ ցաւ է պատճառում օրգանիզմին, որքան էլ չնչին լինի նրա չափը, առաջ է բերում ոչ միայն ֆիզիքական տանջանք, այլ և ցաւի զգացմունք: Այս վերջինն է, գլխաւորապէս, որ երեխաներին ստիպում է իրենց կամքն և ցանկութիւնները ստորադրել ծնողները և դաստիարակների պահանջներին, ցուցմունքներին: Այդ պատճառով ոչ մի զարմանալի բան չըկայ նրանում, որ դաստիարակներից շատերը, մանաւանդ հայրերն և մայրերը, որոնք իրենք էլ կրթւել են նոյն պատիժների վախի» սիստեմով, կրթութեան յիշեալ մեթոդին առաւելութիւն են տալիս բոլոր այն մեթոդներից, որոնք ծնողներից պահանջում են և աւելի շատ զիտութիւն, և աւելի հմուտ և, միևնոյն ժամանակ, աւելի մարդասէր վերաբերմունք դէպի մատաղ սերունդը: Ցաւօք սրտի, դաստիարակութեան այս սիստեմը, թիրիմացութեամբ, ոչ յաճախ հիմնւում է Ս. Գրքի այն անպայման խելացի խօսքի վրա («Աստծու վախը իմաստութեան նախադուռն է»), որի իսկական միտքն և նշանակութիւնը չափից դուրս սխալ և վայր ի վերոյ կերպով են ընթանում հայրերն և մայրերը: «Ծնողները, ասում է Կ. Ուշինսկին, չեն մտածում, որ այս խօսքի մէջ չի ասւած, թէ ամեն վախ իմաստութեան նախադուռն է, այլ միայն Աստու վախը... Եթէ մարդս հասնի բարոյական այնպիսի վեհութեան, որ սկսի միայն Աստծուց վախենալ, դա կընշանակի, որ նա արար աշխարհում վախում է միայն իր սեփական խղճից և ուրիշ ոչ ոքից: Մնացել է ամրեօք խիղճն իր բնական վիճակում

թէ երևան է եկել անդեօք նա յայտնութեան ուսումով, յամենայն դէպս՝ մարդու համար Աստու ձայնն է նա, և եթէ մարդս, ուշք չը դարձնելով աշխարհի սպառնանքների և հրապոյրների վրա, սկսում է ուշի ուշով աւանջ դնել այդ ձայնին, այն ժամանակ նա իմաստութեան, այսինքն՝ բարոյականութեան, կամ բարձր գործնական փիլիսոփայութեան աղբիւր է գտնում նրա մէջ... Սակայն, աւանդ,—նկատում է այնուհետև Ուշինսկին,— երեխային «վախ տալու» սիրողներն ինչ սոսկալի կերպով շահագործում են Ս. Գրքի այս խորունկ միտքը... Նրանք զբանով միայն ծածկում են բարկութիւն զսպելու իրենց անկարողութիւնը, մի հանգամանք, որ նրանց պէտք է դուրս գցէր դաստիարակների ցանկից, և նրանք երեխաներին ներշնչում են ոչ թէ ասուածային, այլ ծնողական, ուսուցչական վախ, որից բղխում են (ինչպէս յետոյ կը տեսնենք) ծուլութիւն, ստախօսութիւն, կեղծիք, խորամանկութիւն, վախկոտութիւն, ստրկութիւն, թուլամորթութիւն, փոքրգութիւն, բայց ոչ երբէք իմաստութիւն»:

Ծնողները, երեխաների մէջ վախի զգացմունք առաջացնելով, նրանց մէջ ստեղծում են միանգամայն բարեկաշտ պայմաններ այլ և այլ հոգեկան հիւանդութիւնների համար. նոյն իսկ վախի զգացմունքը, մի քանի հոգեբանների և հոգեբոյժների կարծիքով, պէտք է հիւանդութիւն համարել, որը հարկաւոր է բժշկել և ոչ թէ պատւաստել և ամրապնդել: Ո՞ւմ յայտնի չէ, որ մենք բոլորս՝ ժառանգականութեան շնորհիւ՝ առանց այն էլ առատօրէն օժտւած ենք վախի զգացմունքով,

ուստի և մենք ոչ թէ միայն մանկական, այլ նոյն իսկ պատանեկան հասակում և դեռ աւելի ուշ, այնքան քիչ արիութիւն և համարձակութիւն ենք ցոյց տալիս մեր գործողութիւնների, մեր վարմունքների մէջ: Իսկ երեխաների դաստիարակութեան գործում պատիժներ գործադրելով աւելի ուժեղացնել վախի այդ զգացմունքը ոչ միայն խելացի չէ, այլ և անգութ բան է:

Եթէ պատիժներն երեխաների մէջ առաջ են բերում, այսպէս թէ այնպէս, նրանցից ազատելու ցանկութիւն և ձգտում, պարզներն, ընդհակառակը, երեխաներին դրդում են ամեն տեսակ բան հարելու, ինչ որ կարող է պարզատրութեան առիթ դառնալ:

Իւրաքանչիւր երեխայ, որ իր գործողութեան և վարմունքի համար ստանում է պարզներ, ակամայից ծանօթանում է իր համար արհեստականօրէն ստեղծւած օգուտների հետ, որոնք առաջ են գալիս ոչ թէ սեփական գործողութիւններից և վարմունքից, այլ ծրնողների ցանկութիւնները կատարելուց: Եթէ մի երեխայ սիրով ընդունում է լոգարան (վաննա), ուրախ զւարթ գնում է զբօսանքի, նա օգուտ է ստանում և հաճոյք զգում անմիջապէս հէնց իր գործողութիւններից: Իսկ երբ՝ ընդհակառակը, երեխան այդ բոլորն աւնում է մի ֆունտ կօնֆեկտի համար, այն ժամանակ նա իր գործողութիւնից դուրս, բոլորովին օտար նկատմանբով է զեկավարւում,—նա ուզում է բերանը մի քիչ քաղցրացնել: Առանց պատիժների ու պարզների գործ անող մանուկների մէջ այնքան հեշտ կերպով ար-

մատ չի բռնում խաբեբայութիւնը, կեյծաւորութիւնն և դժգոհութեան զգացմունքը: Երեխան զբօսնում է, լողանում և ամեն ինչ անում ոչ թէ որևէ կողմնակի շահի կամ վախի պատճառով, այլ որովհետև այդ բոլորը նրա համար օգտակար, դուրեկան բաներ են, վերջապէս, անհրաժեշտ են և չի կարելի նրանց անտես անել: Այն երեխան, որ երբէք պարզեաներ չի ստացել, պատիժներ չի կրել, այս բոլորը կատարում է ոչ թէ որևէ կողմնակի նպատակի համար, այլ միմիայն այն պատճառով, որ այդպիսի և հարկաւոր: Երեխան քաղց զգալով՝ ուտել է խնդրում, և եթէ նրան այդ ժամանակ ասէին, քեզ անպատճառ կամ կը պարզեատրեն, կամ կը պատժեն, եթէ դու ուտել սկսես, նա անչափ զարմացած կը մնա: Ի՞նչու են պարզեատրում կամ պատժում, երբ ինքը կամենում է ուտել և ուտում է մեծ ախորժակով: Ի՞նչ կասէինք մենք այդպիսի մի դաստիարակի մասին, երբ նա ախորժակով ուտող երեխային սկսէր պարզեաներ տալ կամ պատժել նրա համար միայն, որ նա ուտում է: Նոյնն և այլ դէպքերում, երեխան իր ժամանակին գնում է քնելու— մէթէ պէտք է սրա համար պարզեաներ շնորհել նրան:

Այն ինչ, շատ ծնողներ պարզեաներ և պատիժներ գործադրելիս իսկապէս հէնց այդպէս էլ անում են... Բաւական է դիտել երեխաների կիանքը քիչ թէ շատ, որպէս զի ճշտւի այն ընդհանուր միտքը, թէ պարզեաների և պատիժների գործադրութեան բոլոր դէպքերում երեխաները միշտ գործում են, ոչ թէ յանուն գործի շահերի, այլ միայն կողմնակի օգտի և շա-

հի համար, այն է՝ պարզեաները ստանալու, կամ պատիժներից ազատելու համար: Պարզեաներ ստանալու ցանկութիւնը, ինչպէս նաև պատիժներից խոյս տալու ձգտումը երեխային հարկադրում է շարունակ հնարներ գտնել մեծերի ճաշակին ու պահանջներին յարմարելու համար, ուրիշ խօսքով ասած՝ երեւալ և ոչ թէ լինել այնպէս, ինչպէս ուզում են մեծերը: Այդպիսի դէպքերում ամենից առաջ մանկան հոգու մէջ մեռնում ու խեղդւում է ճշմարտասիրութեան ձայնը. իսկ այն երեխան, որ ծնողներից ու դաստիարակներից չի սպասում ոչ պարզեաներ և ոչ էլ ծնողների ծեռքով յատկապէս հնարած պատիժներ, միշտ խօսում ու անում է այն, ինչոր ինքը զգում է ու մտածում: Որևէ բան ծածկելու համար նա ոչ հիմք ունի, ոչ էլ առիթ, նրա լաւ ու վատ արարքները չեն ենթարկւի ոչ արհեստական պարզեաների, ոչ էլ անբնական պատիժների, նա իր արարմունքների համար կըստանայ միայն այն, ինչոր պէտք է ստանայ իրրև իր գործողութիւնների և վարմունքի լիովին անխուսափելի հետևանք... Այդպիսի երեխան միշտ պարզապէս այն կը լինի. ինչոր է իրօք, նա մշտապէս և անշեղ կերպով կասի այն, ինչ որ պիտի անել, և կըսի իր այն, ինչոր պէտք է սիրել, և դրա համեմատ էլ կը գործի ու կը վարուի:

Ծնողները գաւակների դաստիարակութեան մէջ պարզեաներ և պատիժներ գործադրելով՝ նոյն իսկ չեն նկատում, որ դրանով երեխաների հոգու մէջ զարգացնում են անպայման իրար նման ամենալատ զգացմունքներ և հակումներ, զիսաւորապէս վախի զգաց-

մունք: Եթէ մի երեխայ՝ պատիժն աչքի առաջ ունենալով, վախի զգացմունք է տածում, նա երբ պարզեւ չի ստանում (Թէկուզ հասարակ մի գովասանք), վախի նման զգացմունք է ունենում: Այսպիսով՝ չընայած որ կարծես արտաքուստ իրար շատ հակադիր են այն ցանկութիւններն և ձգտումները, որ երեխաները ունենում են պատժելիս ու պարզեատրելիս, — այն է՝ պատիժներ կրելիս ցանկանում, ձգտում են խղիւս սալ և ազատել նրանցից, իսկ պարզեատրելիս՝ ստանալ և օգտել նրանցից, չընայած այս հակադրութեանը, այնուամենայնիւ պարզեաներն և պատիժներն երեխաների մէջ զարգացնում են անպայման բոլորովին նոյնամասն արատներ՝ ստախօսութիւն, խորամանկութիւն, խաբեբայութիւն, հակում ուրիշներին զրպարտելու իր արաբքն և վարմունքը բողարկելու համար, ամբաստանութիւն, մատնութիւն և այլն, և այլն: Իսկ մի քանի բացառիկ դէպքերում, երբ պարզեաների և պատիժների գործադրութիւնն երեխաների դաստիարակութեան մէջ ծայրայեղ չափեր է՝ ընդունում, այն ժամանակ պարզեաներն և պատիժները մասկան բնաւորութեան մէջ զարգացնում են՝ վախկոսութիւն և առանձնացում, իսկ երբեմն նաև ջղային հիւանդութիւններ, որոնց հիմքը կեղծ պատւասիրութիւնն և եսասիրութիւնն են:

II.

Ջանազան տեսակ պարզեաների և պատիժների փաստը հետեանքները

Քիչ ժամանակ չի անցնելու, ի հարկէ, մինչև որ երեխաների ընտանեկան դաստիարակութիւնից և կրթութիւնից վճռականապէս դուրս կը ձգեն ոչ միայն պատիժներն, այլ և պարզեաները: Այդ ցանկալի օրը մօտեցնելու համար աւելորդ չենք համարում աւելի մանրամասնօրէն կանգ առնել պարզեաների և պատիժների փաստակար հետեանքների վրա, թէ երեխաների կեանքի և առողջութեան և թէ նրանց հոգեկան-բարոյական կանոնաւ ր զարգացման համար:

Նուշակաւոր փիլիսոփայ Շլէյերմախերի կարծիքով, զպրոցներում և ընտանիքներում գործադրուող պատիժները կարելի է հետեւալ կերպով դասաւորել.

1) Մարմնական պատիժներ, որոնք երեխային պատճառում են ֆիզիքական տանջանք (ցաւ) և ենթարկում են՝ մասկան օրգանիզմին աճման համար փաստակար այլ և այլ զրկանքների:

2) Երեխային աւելորդ աշխատանքով ծանրաբեռնող և առժամանակ ազատութիւնից զրկող պատիժներ և վերջնապէս՝

3) պատուի զգացմունքը շօշափող պատիժներ:

● Հին ժամանակի ամենատարածւած պատիժները մարմնականներն էին — ճիպոտով ձեծելը, ու մարակով, փայտով, քանոնով, մատիտով հարւած հասցնելը՝ գըլ-

խին, ձեռքերին, մէջքին և մարմնի այլ մասերին, ա-
կանջների և մազերի քաշքշելը, ճաշից, նախաճաշից,
վերջին տեսակ կերակրից, զրօսանքից, լողանալուց,
ընկերական խաղերից զրկելը և այլն և այլն:

Այս տեսակ պատիժները, եթէ նոյն իսկ գործա-
դրելու լինեն բարի նպատակով, այնուամենայնիւ
դարձեալ անհետեանք չեն անցնի երեխաների ձեռքի
և առողջութեան համար և ամենևին չեն կարող նպաս-
տել նրանց բնաւորութեան տգեղ և արատաւոր կող-
մերի ոչնչացման: Ինչ տեսակ պատիժ էլ որ գործա-
դրելու լինենք, անվիճելի ճշմարտութիւն է այն միա-
բը, որ երեխաների բարոյական արատները երբէք և
ոչ մի դէպքում չեն կարող բուժել մարմնական
տանջանքերով, իսկ վերջիններս միշտ ու ամեն պարա-
զայում ճնում են նորաւոր արտանք եւ ամբայնդում
են երեխաների հիւն արտանքն եւ սգեղ հակումները:
Ծնողներն և դաստիարակները պէտք է լաւ ըմբռնեն
այս ճշմարտութիւնն և երբէք չը մոռանան, որ երե-
խաների երբեմն պատահապէս և առերես ուղղելը,
որ իբր թէ արդիւնք է մարմնական պատիժներ գոր-
ծադրելու մեթոդին՝ կախած են ծնողների և դաստիա-
րակների աչքաթող արած այս ու այն պատճառներից:

«Մեր երկրում յաճախ գործադրող պատիժների
մեծ մասը,—զրում է անգլիացի Բրէյլը,—ամենից շուտ
երեխաների մէջ կարող են ծածկամտութիւն առաջա-
ցնել, բոլոր վատ հետեանքներով—երեխաները՝ ոչ
մի կապ չը գտնելով իրենց արարքների և պատիժնե-
րի միջև, միանգամայն բնականաբար դալիս են այն

եզրակացութեան, որ պատիժներից խոյս տալու հա-
մար բաւական է միայն իրենց արարքը ծածկել և այդ-
պիսով պատժի առաջն առնել»: Ահա երեխաների դաս-
տիարակութեան մէջ գործադրւած պատիժների բնա-
կան հետեանքը...

Մի ուրիշ հեղինակ պատմում է, որ Վասիլ ա-
նունով մի փոքրիկ տղայի պատժում էին շուտ-շուտ
և սաստիկ. ի պատասխան պատիժներին նա քանի
գնում կատաղում էր. ուստի և նորից պատժում էին,
նա ևս առաւել անուղղայ էր դառնում. մի անգամ
նոյն իսկ, երբ տատը իր ձեռքը մօտեցրել էր նրա
ականջներին, որ քաշի, նա խածեց տատիկի մատը:
Վերջապէս, նրան զսպեցին, բայց ոչ բոլորովին, չա-
րութիւններն և պատիժները շարունակում էին: Մն-
ցաւ ժամանակ, աւելի բացարձակ չարութիւնների
թիւը պակասեց, սակայն նա չէր ուղղւում. նա միայն
աշխատում էր որևէ կերպ, ամենքից թաքուն, տա-
տին բարկացնել, և, իրօք, բաւական յաջողում էր.
խորամանկութիւնն և չարամտութիւնը արագ աճում
զարգանում էին նրա մէջ: Յաճախ նա թաքուն մըտ-
նում էր տատիկի սենեակը, նրա ձեռագործի կողովից
վերցնում էր որևէ բան ու զցում էր վառարանի մէջ:
Երբ սկսում էին փնտրել, Վասիլը երդւում, հաւատաց-
նում էր, որ իսկի չի տեսել այդ իրը: Մի անգամ նա
եռացող ջուր լցրեց տատիկի սիրելի ծաղկի վրա, որից
ծաղիկը թառամեց. մի ուրիշ անգամ էլ նա ծակծկեց
տատիկի թանգագին բազկաթոռը»: Ահա թէ ինչպիսի
հետեանքներ են ունենում ծնողների և դաստիարակնե-

րի լիովին բարի ձգտումները՝ պատիժների օգնու-
թեամբ երեխաների արատաւոր յաւիութիւնները ո-
չնշացնելու:

Պատիժի երկիւղը ոչ թէ միայն առաջ է բերում
ստախոսութիւն, կեղծաւորութիւն, զրպարտութիւն, այլ
և ազդում է բնաւորութեան կազմակերպութեան վրա:

«Եթէ, ասում է Վ. Կ. Ելնիցկին, երեխան ճնշւած
է շրջապատողներից, եթէ մշտապէս գտնուում է պա-
տիժ կամ կշտամբանք ստանալու երկիւղի տակ, եթէ
նա իրեն շրջապատող մարդկանցից և ոչ մէկից չի
տեսնում ոչ փաղաքշանք, ոչ էլ քաղցր վերաբերունք,
այդ դէպքում նա կարւում, առանձնանում է բոլորից:
Ես ճանաչում էի մի պաշտօնեայի որդու, որ «աշխար-
հից կարւած» ու անհամբոյր դարձաւ իր հօր անմիա
խտութեան շնորհիւ: Հայրը կամենում էր որդու մէջ
զարգացնել կոյր հպատակութիւն և անպայման ճշտա-
պահութիւն, կարծելով, թէ դա է մարդու բնաւո-
րութեան լաւագոյն կողմը: Տղան նոյն իսկ չէր կարող,
այսպէս ասած, շարժել առանց հօր թոյլտուութեան.
անգամ երբ հրեխան, լրագի ետեից ընկած մոռանում
էր հօրը և նրա սպանանաբնիկի մասին, հայրը
յանկարծ գոռում էր նրան. «Ե՛կ այստեղ»: Երեխան
իսկոյն յայտնում էր: «Շուտ ասա՛ ձայուն եւ Մրջիւնը
ստակը», պատերոս էր հայրը: Երեխան վախից չէր
կարողանում անմիջապէս ասել: «Հ՛ը, ի՛նչ եղաւ», գո-
ռում էր հայրն, անթարթ և սպառնալից նայելով նրա
վրա: Որդին կատարելապէս շփոթւում էր: «Իու չե՞ս
ուզում պատասխանել... դու յամարում ես... դու հա-



մարձակում ես հօրդ չէր հաղանդել» և այլ և այլն: Մի
խօսքով, հայրը այնչափ ծանրորոշանէր Երեխային,
մինչև որ ուժից հալից կը շարժուէր արտաքին որդուն
նա ստիպում էր ամբողջ ժամերով կանգնել անկիւ-
նում կամ պատժում էր ուրիշ նոյնանման միջոցներով...
Եթէ որդին սկսում էր թողութիւն խնդրել, հայրը գո-
ռում էր. «Ի՛նչպէս, դու համարձակում ես հօրդ հա-
կառակել», նորից սկսում էին կշտամբանք ու սպառ-
նանք, սպանանք ու կշտամբանք: «Հասկանալի է,
— հկատում է նոյն հեղինակը, — որ այսպիսի կրթու-
թիւնից, որդին չէր կարող չը կղզիանալ, չառանձնա-
նալ ինքն իր մէջ, չէր կարող անհամբոյր չը դառնալ,
չէր կարող չը վախել ոչ միայն հօրից, այլ նոյն իսկ
կողմնակի մարդկանցից...»:

99091

Այս մի երկու փաստը, թէև դրանց թիւը մենք
կարող ենք անչափ մեծացնել, բաւական են, որպէս զի
պարզւի այն միտքը, թէ պատիժներն ի՛նչ մեծ և
անբարոյականացնող ազդեցութիւն են գործում ման-
կական հոգու վրա: Ծնողները իրենց զաւակներին
պատժելով՝ ակներև է որ որ ոչ թէ ուզղում են նը-
րանց թերութիւնները, այլ նրանց հոգու մէջ ցանում
են աւելի ծանր և արատաւոր զգացմունքներ՝ ստախո-
սութիւն, խամբերայութիւն, զրպարտութիւն, ծածկա-
մտութիւն և այլն:

Երկրորդ տեսակի մէջ մտնում են այն պատիժ-
ները, որոնք կապւած են երեխային աւելի աշխատան-
քով ծանրաբեռնելու և ժամանակաւորապէս ազատու-
թիւնից զրկելու հետ: Այդ տեսակ պատիժները, ա-

ուսման տեսակի պատիժների պէս, ոչ մի օգուտ չը տալով երեխաներին նրանց բարոյական կատարելագործութեան ամբողջ ընթացքում, շատ անգամ անպայման լուրջ ֆլաստներ են հասցնում երեխաների մարմնական և հոգեկան առողջութեան: Օրինակի համար, առանց այն էլ միևնոյն տեղում երկարատե նստելուց նւագած երեխային, իբրև պատիժ, ստիպում են դարձեալ նստել ամբողջ ժամերով և պարապել ընթերցանութեամբ, գրութեամբ, որևէ բան անգիր անելով և այլն և այլն: Մանկան յոգնածութիւնը հասնում է ծայրայեղ չափերի, և մեծ բախտաւորութիւն է նրա համար, եթէ այդտեղ և եթէ, գրքի կամ տետրակի վրա քնի. հակառակ դէպքում չափազանց լարւած ուղեղային աշխատանքը նրա մէջ կառաջացնի գլխացաւ կամ ուրիշ ցաւեր: Այստեղ էլ նախընթաց պատիժների նման, երեխայի արարքի և ստացած պատժի միջև ոչ միայն չը կայ ոչալ կապ, տեղի չի ունենում նոյն իսկ երեխայի բարոյապէս ուղղելը, — ծուլութիւնը, կոպտութիւնը, անուշադրութիւնը, յանդգնութիւնն և սրանց նման թերութիւնները մազաչափ անգամ չենք կարող վերացնել, երեխային սաստկացրած պարապմունքներով ծանրաբեռնենք և այդ պարապմունքները, կրկնում եմ, ուղեղի յոգնածութիւն առաջ բերելով, միայն ու միայն վնասակար հետեանքներ կարող են ունենալ մանկան առողջութեան համար, մարմնական պատիժների նման, սովորեցնելով երեխաներին խուսափել պատժներից խորամանկութեան, խաբեբայութեան, ստախոսութեան և այլ ուղիով:

Այս տեսակ պատիժների թոււմ կարելի է հաշուել նաև երեխաներին նկուղներում, մութ անկիւններում և սենեակներում նստեցնելը: Այսպիսի պատիժների գործադրութիւնը պէտք է անպայման ֆլասակար ճանաչել, որովհետև կարող են հոգեկան հիւանդութիւններ առաջացնել: Հոգեբուժութեան մէջ յայտնի մասնագէտներ—Durand-Fardel և Collineau ընդունում են որ ոչ թէ միայն ծնողների կոպիտ վարմունքը զաւակների հետ, այլ և յանդիմանութիւններն ու մանուաւանդ սենեակի մէջ բանտարկելը լինում են մանկական ինքնասպանութեան նախատրամադրող այս պատճառներ: Վերոյիշեալ հեղինակներից առաջինը շարժառիթներին է վերագրում Ֆրանսիայում 1859 թ. հրատարակւած 182 մանկական ինքնասպանութեան դէպքերից 132-ը, երկրորդ հեղինակը 16 դէպքերից 7-ը: Ինքնասպանութեան վերոյիշեալ բոլոր դէպքերից կը յիշատակենք միայն երկուսը, որոնք անմիջապէս վերաբերում են մեր նկարագրած պատիժների կատեգորիային: Տասնեմկ տարեկան մի տղայ չարութիւն էր արել և հրաժարում էր ներողութիւն խնդրելուց: Իբրև պատիժ նրան արգելեցին սենեակի մէջ և մի ժամից յետոյ գտան հագուստեղէն կախադանից կախւած: Տառներկու տարեկան ինտելլիգենտ և բարեկիրթ մի տղայ կոտորել էր իր հօր ժամացոյցի զսպանակը: Նրան փակեցին առանձին սենեակի մէջ, և մի քիչ անց գտան կախւած: Եթէ առանձին սենեակի կամ նկուղի մէջ փակելը միշտ սրա նման հետեանքներ չի ունենում, գոնէ անկասկած՝ երեխայի հոգու մէջ միշտ

ստեղծում է հոգեկան անհաճոյ զգացմունքներ՝ երկիրդ, անվստահութիւն դէպի մարդիկ, չարամտութիւն, մեղամարդոտութիւն, իսկ երբեմն նաև հոգեկան հիւանդութիւնների պատճառ է դառնում:

Վերջապէս վերջին տեսակին վերաբերում են այնպիսի պատիժները, որոնք պատուի զգացմունք են շօշափում:

Մրանց թւում են՝ յանդիմանութիւնները, խրատները, յորդորները, յիմար գլխարկներ, հագուստներ և այլ նշաններ հագցնելը. 1) նաև վերջապէս՝ բոլորի ներկայութեամբ երեսանների արատների, արարքնիրի և տրգեղ սովորութիւնների մասին ծանուցանելը նրանց հասակակիցների կամ օտար ընտանիքների շրջանում: Այսպիսի պատիժների համար մեղ մնում է կրկնել նոյնը, ինչ որ ասացինք միւս պատիժները քննութեան աննելիս, այսինքն, որ նրանից ոչ մէկը չի նպաստում երեսանների մէջ արատների ոչնչացման և, ընդհակառակը, որոշ դէպքերում նոյն իսկ զարգացնում է նոր, չեղած արատներ:

1) Մի կին պատմում է, որ երբ նա դեռ նոր էր պանսիոն մտել, սարսափահար եղաւ մի աշակերտուհու պատժելուց: «Այս վերջինիս գլխին դրին սրածյար գլխարկ, ուսին ձգեցին խրսիւր և թոկից բռնած ման էին անում բոլոր սենեակներով. աղջիկը վշտից ու ամօթից այլայլած՝ աղի արցունքներ էր թափում: Երբ նրան անց էին կացնում երրորդ անգամ, նա այլ ևս չէր լալիս, այլ կատաղութիւնից ժպտում էր և մեր երեսին ծամածոութիւններ էր անում և իրեն ման անող m-le-ի քամակից ձեռքերով քիթ էր ցոյց առլիս»:

Վերոյիշեալ պատիժների բոլոր տեսակների նըկատմամբ կոմս Լ. Տօլստօյը իրաւամբ ասում է, որ ժամանակ է դադարելու նրանց նպատակայարմար լինելուն հաւատալ, ժամանակ է ընդունելու, որ «հոգու մէջ, մեր հայեացքից ծածուկ, կան գաղտնիքներ, որոնց վրա ներգործել կարող է միայն կեանքը, և ոչ թէ քարոզներն և պատիժները»: «Եւ ի՞նչ անմտութիւն, — նկատում է նոյն հեղինակը, — երեսան գիրք է գողացել, — զգացմունքների, մտքերի, սխալ մտածողութիւնների երկար ու ձիգ ճանապարհով նա հասել է այնտեղ, որ վերցրել է ուրիշի գիրքը և չը գիտես ինչու՞ թողցրել է իր արկղի մէջ — իսկ ես նրան կպցնում եմ թղթի կտոր «գող» մակագրութեամբ, որ բոլորովին ուրիշ բան է նշանակում: Եւ ի՞նչու է այս բոլորը: Նրան ամօթահար անելու համար, կը պատասխանեն ինձ: Ամօթահար անելու համար: Ի՞նչու: Ի՞նչ ասել է ամօթ: Միթէ հաստ յայտնի է, որ ամօթն ոչնչացնում, սպանում է գողութեան հակումը: Գո՞ւցէ նա ընդհակառակը՝ առաջացնում է և զարգացնում է: Նրա դէմքի վրա արտայայտւածը, գո՞ւցէ ամօթ չէ: Ես նոյն իսկ հաստ գիտեմ որ նրա դէմքի վրա երևեցածը ոչ ամօթն էր, այլ բոլորովին ուրիշ բան, որը, գուցէ ընդ միշտ քնած մեջ նրա հոգու խորքում և ամենեկին հարկաւոր չէր այդ զգացմունքի երևան գալը... Թող այնտեղ, Պաշմբստօնների և կայէնների իրական յորջորջող աշխարհում, ուր խելացի է համարուում ոչ միայն խելացին, այլ և այն բոլորը, ինչ որ իրական է — թող այնտեղ արդէն պատժւած մարդիկ պարտք ու իրաւունքներ

ստեղծեն պատժելու համար... Մեր երեխաների աշխարհը—հասարակ և անկախ մարդկանց աշխարհը—պէտք է զերծ մնայ ինքնախարէութիւնից և դէպի պսիժմների օրինակ սնուրիւնը տածած յանցաւոր հաւատից, այն հաւատից և ինքնախարէութիւնից, թէ վրէժխնդրութեան զգացմունքն արդարացի է այն ժամանակ, երբ նրան պատիժ անունն ենք տալիս...»

Գալով պարզկներին, պէտք է ասենք, որ նրանց ազդեցութիւնն երեխաների հոգեկան աշխարհի վրա հազիւ թէ պակաս ֆլաստակար լինի, քան պատիժների ազդեցութիւնը:

Ուշի ուշով դիտելով ծնողների յարաբերութիւնն իրենց զաւակների հետ, հեշտ է նկատել, որ շատ մայրեր, նամանաւանդ հայրեր, շատ անգամ երեխաներին պարզատրելի իրանց անմիջական պարտականութիւնն են համարում, կամ կապում են երեխաների կեանքի այնպիսի պայմաններ հետ, որոնք անշուշտ և անխուսափելիօրէն պէտք է հաճոյք պատճառեն երեխաներին:

«Եթէ լաւ տղայ կը դառնաս և քաղաքավարի կը վարուես մօրաբրոջդ հետ, այն ժամանակ,—ասում է հայրը,—ես քեզ համար կառնեմ նոր կօշիկներ, կամ նոր գլխարկ, կամ մի այլ շորեղէն», — նախօրօք գիտենալով որ այս բոլորն առանց այն էլ անհրաժեշտ է առնել: Իսկ երեխան, իր հերթին, շատ լաւ հասկանում է, որ հայրն այս ամենն անպատճառ առնելու է: Կարելի էր սրա նման հարիւրաւոր օրինակներ բերել, երբ ծնողներն երեխային իբրև պարզ

լաւ վարքի համար տալիս են այն, ինչ որ նրանք առանց այն էլ անպատճառ պէտք է գնէին, երեխայի լաւ ու վատ վարքից անկախ: Շատ ու շատ անգամ երեխաներն այնքան էլ միամիտ չեն, որ այս բոլորը չը հասկանան, ուստի հետևանքն այն է լինում, որ որդիքը հաւատ չեն ընծայում իրենց ծնողներին և լաւ գիտեն, որ խոստացած պարգևը միևնոյն է կը տրւի, ինչպէս էլ որ նրանք պահելու լինեն իրենց՝ վատ թէ լաւ:

Թէ սրչափ հակամանկավարժական են այս միջոցները—դա պարզ է իւրաքանչիւրիս համար:

Ընտանեկան դաստիարակութեան մէջ, բացի վերոյիշեալ «կեղծ պարզկներից», գոյութիւն ունեն և գործադրուում են ուրիշ պարզկներ, որ երեխաներին տրուում են կատարած խիստ օրոշ պահանջների և պատէշների համար: Պարզկների այս տեսակը երեխաների մէջ առաջացնում է առանձին տեսակ հաճելի զգացմունք կամ զուտ կենդանական-աճողական, կամ հոգեկան: Եթէ խօսելու չըլինենք այդ պարզկները՝ երեխաների առողջութեանն և մտաւոր, բարոյական զարգացմանը հասցրած ֆլաստների մասին (ինչպէս են, քաղցրեղէնների անչափ գործածութիւնը, երեկոյթներին և այլ զւարճութիւններին գնալը և այլն, և այլն), նոյն իսկ ինքը պարզկատրութիւնը այն համոզմունքն է ստեղծում երեխաների մէջ, որ իրենք ոչ միայն լաւ են կատարում իրենց պարտականութիւնները, այլ և կատարում են պահանջներից աւելի մեծ չափով, այն ինչ բանից դուրս է գալիս, որ նրանք իսկապէս ան-

համեմատ աւելի քիչ բան են անում, քան պարտաւոր էին ու կարող էին անել: Այսպիսի մի համոզմունք, կամ աւելի ճիշտն ասած՝ այսպիսի մի ինքնավստահութիւն պարարտ հող է ներկայացնում մեծամտութեան, մնապարծութեան, ամբարտաւանութեան և նման տգեղ յատկութիւնների բարեյաջող զարգացման համար ապագայում: Բայց սա չէ բոլորը: Երբ երեխան պարզ է ստանում մի այնպիսի բանի համար, որ առանց այն էլ պարտաւոր էր անել, այն դէպքում նա շատ շուտ սովորում է ամեն ինչ որևէ շահի, որևէ օգտի համար անել: Կամաց կամաց և ծնողների համար աննկատելի կերպով երեխաների գործունէութեան այդպիսի ուղղութիւնը, մարմին ու արիւն դառնալով, փոխում է սովորութեան, և այն ժամանակ նրանց գործողութիւնների, արարքների և կողմնակի մարդկանց հետ ունեցած ամեն տեսակ յարաբերութիւնների միակ դրդիչ ուժը նիւթական շահն է լինում կամ այլ և այլ եսական ձգտումները: Իսկ նման եսասէր ձգտումների զարգացումը, որոշ դէպքերում, կարող է այնպիսի չափեր ընդունել, որ նրանց ազդեցութեան շնորհիւ կարող են իսկապէս հիւանդագին երեւոյթներ առաջանալ, որ վերջի վերջոյ կը հասցնեն հոգեկան տկարութեան:

Երեխաների հոգեկան վիճակի վրա պատժի և պարզևի արած այսպիսի հիւանդագոյթ ազդեցութեան օրինակը բերում է միզ յայտնի մանկավարժներից մէկը:

«Կեանքիս մէջ. — պատմում է Ի. Դ. Բէլովը, — շատ անգամ ականատես եմ եղել դաստիարակների և ուսու-

ցիչների գործագրած պատժական սիստեմից առաջացած տխուր երեւոյթներին: Տասներեք տարեկան մի ինքնասէր, զգայուն և աշխարհագրական քարտէսների գծագրութեան մէջ ձիրք ու շնորհք ցոյց տուող աղջիկ մի բանի անգամ արժանացել էր ուսուցչի յատուկ գովասանքի, բոլոր աշակերտուհիների ներկայութեամբ: Այժմ համարեա իմ աչքիս առջ այդ աղջիկը աշխարհագրութեան դասի սկզբին ընկնում է ինչոր ջղային գրգռւած դրութեան մէջ, որ շատ հեշտ է բացատրել: Ի՞նչը նրանումն է, որ նա ուզում է քարտէսն առաջևանից աւելի լաւ նկարել, որովհետև գովասանքին արժանանալու տենչը նրա մէջ օր առ օր աճում է: Ամբողջ 4 ժամ քարտէսի վրա աշխատանք թափելուց յետոյ, նա յանկարծ, սարսափելի կատաղութեամբ, պատուում է քարտէսը, որովհետև անաշուք, անբաւարար է գտնում: Սկսում է նորից գծագրել, որի ժամանակ նա մոռանում է և՛ քունն, և՛ մտննը: Եթէ ուսուցիչն նրա աշխատանքը գովել է, աղջիկն ուրախ է, թոչկոտում է ու հանաքներ անում. իսկ եթէ ուսուցիչը մոռացել է գովել կամ քիչ է գովել, այն ժամանակ իմ ծանօթ աղջիկը, ուսումնարանից վերադառնալով, կատարեալ ցաւ ու պատիժ է դառնում ընտանիքի գլխին, գրգռուած նա ամեն ինչ տակն ու վրա է անում, բոլորի հետ կռում է, ամեն մի յիմար բանի համար լաց է լինում, իսկ երբեմն նոյն իսկ ունենում է ջղային ցընցումներ... «Ձի կարելի երաշխաւորել, աւելացնում է Ի. Դ. Բէլովը, որ երբ և իցէ աղջիկը բաւարարութիւն

չըստացած ինքնասիրութիւնից դրդւած ձեռք չի բարձրացնի իր վրա»:

Այսպէս ուրեմն իրական կեանքից վերցրած մեր օրինակները լի ու լի կերպով ապացուցանում են, որ պատիժներն և պարգևները բոլորովին չեն օգնում երեխաների մէջ արատներ ոչնչացնելու, ուղղելու գործին, այլ ընդհակառակը, թէ պատիժներն և թէ պարգևներն երեխաների մէջ զարգացնում են այնպիսի արատներ և յատկութիւններ, որ երկաթի լուծի նման ծանրանում են երեխաների ներքին, հոգեկան աշխարհի վրա... Այսպիսի փաստերի դէմ մի թէ կարելի է որ և է խելացի բան ասել յօգուտ պարգևների և պատիժների գործադրութեան:

III.

Պարգևների և պատիժների լայն գործադրութեան պատճառները ընտանեկան դաստիարակութեան մէջ

Ո՞րտեղ և ի՞նչի մէջ պէտք է որոնենք պարգևների սիստեմի լայն ծաւալման պատճառները ընտանեկան դաստիարակութեան գործում, չը նայած այդ սիստեմի լիակատար անբովանդակութեան: Այդ պատճառները պէտք է վերագրենք նախ և առաջ ծնողների և դաստիարակների մեծագոյն մասի անծանօթ լինելուն երեխաների կարիքների և հոգեկան կեանքի հետ, և այնուհետև դէպի երեխաներն ունեցած ոչ բո-

լորովին կանոնաւոր վերաբերմունքի, որ արդիւնք է այդ անգիտութեան:

Մանկական կեանքի հէսց առաջին օրերից ծնողներն իրենց զաւակներին դնում են այնպիսի պայմանների մէջ, որոնց շնորհիւ արդէն նախօրօք կարելի է գուշակել, որ եթէ յետագայ դաստիարակութիւնը միևնոյն ոգով ընթանայ, անհրաժեշտաբար կը հարկաւոր են պարգևներն և պատիժները: Եթէ երեխաների ծննդեան օրից մինչև դպրոցական հասակն ուշի ուշով հետևենք ծնողական յարաբերութիւնների պատմութեանը, կը տեսնենք որ երեխաները՝ իբրև իրենց ծրնողներին լիովին ստորագրւած էակներ, մեծ մասամբ միայն այդ յարաբերութիւնների շնորհիւ է, որ ենթարկւում են բազմատեսակ պարգևների և պատիժների, ոչ թէ իրանց բնաւորութեան առանձնայատկութիւնների շնորհիւ:

«Բանի դեռ երեխաները փոքր են,—ասում է կաւելինը—ծնողները, նրանցով զետեղանալով, թոյլ են տալիս այնպիսի բաներ, որ նրանց ֆլաստում է բարոյապէս (իսկ աւելի յաճախ նաև ֆիզիքապէս), մինչդեռ իրենց պարտականութիւնների տեսակէտից ծնողները պէտք է աչքի առաջ ունենան ոչ թէ իրենց հաճոյքը, այլ զաւակների օգուտը: Երեխաների խելացի դաստիարակութեան միակ միջոցը, որ կատարելապէս մոռանում են ծնողները, կայանում է ոչ թէ պարգևների կամ պատիժների մէջ, այլ նրանում, որ ծնողներն իրենց զաւակների բարեկամները լինեն, ունենալով նրանցից փորձառութեան և տարիքի առաւելութիւնը

միայն, և պէտք է լինեն այնպիսի բարեկամներ, որոնց երեխաները բոլորովին անվախ մտենային և բացասիրտ կերպով յայտնէին իրենց մտքերն և ցանկութիւնները... Այն ժամանակ չէր ծնւի վախը, որ սպանում է մարդկային արժանաւորութիւնների զարգացումը:

Եւ, իսկապէս, ու՞մ յայտնի չեն ծնողական յարաբերութիւնների այնպիսի դէպքեր, երբ ծնողներն իրանց զաւակների վրա (նախադպրոցական շըրջանում) նայում են, իբրև հաճելի և ուրախ զարճալիքի վրա, որ շատ դէպքերում նմանում է կապիկի, թուժակի, շնիկի և այլ կենդանիների պատճառած զլւարճութեան: Ծնողները, շատ անգամ ամբողջ ժամերով նստելով իրանց զաւակների օրօրոցի մօտ, արդէն այդ րոպէից թոյլ են տալիս նրան անել ամեն տեսակ զարճութիւններ և խաղեր, որոնք շատ անգամ հրեխայի մէջ սպանում խեղդում են յարգանք դէպի ծընողների անձաւորութիւնը. երեխան մերթ իր փափուիկ թաթիկներով եռանդազիւն և ձանձրացնելու չափ փետում զգզում է հօր միտուքը կամ քաշքշում է դէմքի այլ մասերից, մերթ էլ ջանում է իր ձկուն տոտիկը խոթել քնքոյշ ծնողի բերանը, որն իր սիրելի «զաննուկին» գուրգուրում է գգւում է սիրոյ և քնքշութեան բառերի տարափով: Մայրը աւելի մեծ տոկունութեամբ և գոհունակութեան աւելի մեծ զգացմունքով է տանում երեխայի այդ տեսակ գործողութիւններն և արարքները, թէ նրա մանկական հասակում և թէ յետագայում... Ապա ի՞նչ, առարկում են մեզ, երեխաներին իրենց կեանքի շէմքին չը պէտք է

տանք ամեն տեսակ զարճութիւններ և խաղեր: Այս հասակի երեխաներից չի կարելի գիտակցական վերաբերմունք պահանջել դէպի իրենց գործերն և արարքները:

Սակայն անա վրա է հասնում երեխաների 3, 4, 5—տարեկան հասակը, երբ նրանք արդէն կատարելապէս ման են գալիս և վազվզում, իրբ նրանց մէջ զգալի կերպով երևան են գալիս ցանկութիւնն և կամքը, իսկ սրա հետ նաև՝ ինքնուրոյնութիւն գործողութիւնների և արարքների մէջ: Շատ ծնողներ այս հասակի երեխաներին միանգամայն անմիտ և իրենց զարգացմամբ՝ բարձր կենդանիներին հաւասար էակներ համարելով, աւելի են լիակատար ազատութիւն գործելու և վարելու մէջ, ճասակ առած երեխաների վերաբերմամբ գործադրելով միևնոյն մանկավարժական սիստեմը, ինչ որ գործադրել են երեխաների մանուկ հասակում: Ո՞ւմ արդեօք յայտնի չեն օրինակ՝ այսպիսի ծնողական յարաբերութիւնները. երեխան ներս մտնելով իր հօր առանձնասենեակը, նրա սովորական զբաղմունքի և հանգստի ժամերին, րոպէսապէս բարձրանում նստում է նրա ծնկներին, իսկ եթէ հայրը պառկած է տախտի վրա, նրա մէջքին կամ կրծքին... Հայրն ուրախ է և զարճանում է... երեխան, սիրով և ոպկուրած, ֆիզիքական հազար ու մի մարդանքներ է անում իր հօր ձեռքերի, դէմքի, մարմնի այլ մասերի վրա, ճիշտ այնպէս, ինչպէս որ խաղում է պոտասմամբ իր ձեռք ընկած առարկաների հետ... Գրասեղանի մօտ, հօր ծնկների վրա նստած լինելով, երեխան

մերթ ծխախոտ է թոցրում և տեղն ու տեղը պատա-
 ոտում, մերթ էլ թոցնում է մատիտ, թուղթ, ժամա-
 ցոյց, կամ մի որևէ ուրիշ բան: Կայ բան, որ հայրը
 թոյլ է տալիս վերցնել, կայ բան՝ որ արգելում է,
 յանկարծակի թոցրածը՝ խլում է. երեխան այդ դէպ-
 քում ճիշդ ու լացով յայտնում է իր դժգոհութիւնը, և
 յաճախ բարի հայրիկներն և մայրիկները, որպէս զի
 երեխան դադարի յամառելուց, սիրով հաշտում են որ
 և է բան ոչնչացնելու, փչացնելու և աւերելու նրա
 ցանկութեան հետ... Դուրս գալով հօր առանձնասե-
 նեակից, երեխան անցնում է սեղանատուն, ընդունա-
 րան, մօր, տատի կամ ընտանիքի միւս անդամների
 սենեակներն և այդտեղ էլ կնկնում է միկնոյնը: Մի
 խօսքով, երեխային ամեն քան թոյլ է տրուում, իսկ
 եթէ որևէ բան մերժում են, այն ժամանակ նրա կա-
 տաղի լացն ու ճիշը ստիպում է մեծերին զիջել և ի
 կատար ածել նրա ցանկութիւնները... Մանկանոցում
 հօ նա լիակատար տէր է և տնօրէն. այդտեղ նա
 իր իւրաքանչեւ գործողութեանց սիստեմը գործադրում
 է ամենալայն չափով, և թէ՛ դայեակը, թէ՛ ուրիշ-
 ները իսկոյն և եթէ կատարում են նրա բոլոր
 ցանկութիւններն և հաճոյքները: Մեծերի այսպի-
 սի վարելողութեան հետևանքն այն է լինում, որ ե-
 րեխան շատ շուտ փչանում է ու բարոյապէս ընկնում.
 նա դառնում է անհնազանդ, կամակոր և պահանջկոտ,
 յամառ, ձանձրացնող, ինքնահաճ: Եւ հէնց իրենց՝ ընտա-
 նիքի սնդամների ձեռքով ստեղծած այս տեսակ-տեսակ
 պակասութիւններին արմատախիլ անելու համար է, որ

ծնողները դիմում են մերթ պարզենքին, մերթ էլ,
 ցաւօք սրտի, պատիժներին:

Ձաւակների հետ բուրովին այլ կերպ են վար-
 ւում այն ծնողները, որոնք իբրև դաստիարակութեան
 հիմք ընդունում են «սոս, ձէնդ կտրի՛ր» սկզբունքը:
 Եթէ վերը նկարագրած դաստիարակութեան սիս-
 տէմում ամեն ինչ թոյլատրւած էր, այստեղ, ընդ-
 հակառակը, ամեն բան արգելւած է, բացի ըն-
 տանեկան կեանքի ըէժիմի խստիւ որոշւած կա-
 նոններից և քաղաքավարութեան պահանջներից: Երե-
 խաների այն բոլոր ցանկութիւնները, որ չեն բռնում
 մի անգամ ընդունւած և նախօրօք ծրագրւած կարգ ու
 կանոնին, ոչ միայն խստիւ արգելւած են, այլ և ա-
 ուանձնապէս հալածւում են ծնողների կողմից: Մի խօս-
 քով, երեխան պէտք է լսի և առանց այլևայլութեան
 հնազանդւի մեծերի բոլոր պահանջներին: Նա չունի
 գործողութիւնների ազատութիւն, և չի էլ կարող ու-
 նենալ, բացի նախապէս մեծերի ձեռքով որոշւածից, և
 եթէ նա փորձ անի տւած ազատութիւնը լայնացնելու,
 այն ժամանակ տակից կը կտրեն նրա թևերը զանա-
 զան հրամաններով, սաստումներով, երբեմն էլ պա-
 տիժներով:

Դաստիարակութեան այս սիստեմը իր ամբողջ
 էութեամբ երևան է գալիս այն դէպքերում, երբ ծնող-
 ներն և դաստիարակչուհիներն ուզում են ուրիշ հայ-
 րիկներին և մայրիկներին ցոյց տալ որ իրենց սա-
 նիկները խիստ բարեկիրթ ու խելացի են: Այսպէս, օ-
 րինակ, շատ անգամ պատահել է տեսնել և լսել այն-

պիտի դաստիարակչուհիներ, որոնք վերջին տարազով գուգւած երեխաներին բերում են հասարակական պարտէզ զրօսանքի և հրամայում՝ «կամաց, չը վազէք», «հետու չերթաք», «խելօք գնացէք», «ձեռքերը չը շարժէք», «կրկնակօշիկները չը հանէք», «չը նստէք», «քարու աւաղ չը վերցնէք», «գնդակը բարձր չը նետէք», «Չը ճւճւոճ», «ձեռնոցները չը հանէք», «նստեցէք, հանգստացէք», «գլխարկները չը հանէք», և այլն և այլն: Մի խօսքով, երեխան դառնում է անկամք և անզգացմունք մեքենայ, որ մշտապէս կատարում է այն, ինչ որ նախապէս նշանալուծ ու որոշուած է:

Ի՞նչ զարմանալու բան է, եթէ այդ պարագաներում սնւած երեխան երբեմնապէս անհնազանդ, յամա գտնւի: Ի՞նչ կը լինի միանգամայն բնական և նօրմալ:

Այդպէս ուրեմն, ահա դաստիարակութեան երկու ծայրայեղ սիտուսներ, որ աւելի կամ պակաս չափով իշխում են մեր ժամանակակից բնտանիքներում,—կամ լիակատար սանձարձակութիւն, կամ գինւորական խրստութիւն. սրանցից և՛ մէկը, և միւսն իր վերջնական հետևանքներով անխուսափելիօրէն հարկադրում է ծվողներին դիմել պարզենքի կատիժներին և պատիժներին... երեխայի «արատաւոր» բնութիւնն սկզբելու համար: Ներկայ դէպքում, մեղաւոր են արդեօք զաւակները, երբ ծնողները, մի կողմից, դեռ համարեա թէ բարուրից, նրանց նախ տալիս են գործողութիւնների և արարքների լիակատար անսահման և միանգամայն անմիտ ազատութիւն, և eo ipso, նրանց

բնաւորութեան մէջ սերմանում են բմահաճութիւն, անհնազանդութիւն, յամառութիւն և ուրիշ նոյնանման տգեղ սովորութիւններ, իսկ այնուհետև այդ արատների ոչնչացման համար դիմում են պարզենքի և պատիժներին: Միւս կողմից, մեղաւոր են արդեօք նոյն երեխաները, երբ ծնողները՝ նախ չափազանց ճնշելով նրանց ազատ կամքը և նրանց ցանկութիւններն ու զգացմունքները ստորագրելով քաղաքավարութեան այլ և այլ պայմանական պահանջներին և մանաւանդ, հասարակութեան մէջ, ներկայ միջավայրում, ընդունւած ու չընդունւած զանազան ձևերին, այնուհետև դիմում են երեխաներին «սահձահարող» միջոցների, երբ երեխաները սկսում են իրենց բնութեանն և հասակին յատուկ բաներ անել: Այսպիսի դէպքերում, վերև նկարագրուած ծնողներին և դաստիարակներին ակամայից մի հարց են տալիս՝ էլ ո՞ւր է ճշմարտութիւնը, ո՞ւր է սէրը դէպի երեխաները, ո՞ւր է մանկան բնութեան կարիքների հետ ծանօթութիւնը... Ո՞ւր են, ո՞ւր այդ բոլորը: Չըկան դրանք և չեն եղել, գլխաւորապէս հէնց դրա մէջն է այն չարիքը՝ որ խեղճ երեխաներին ստիպում է պատիժների ենթարկուել կամ պարզենքի հմայքի ազդեցութեան տակ գործել:

Մակայն միայն ծնողների հակամանկավարժական վարելողութիւնը չէ, որ փչացնում և բարոյապէս այլանդակում է երեխաներին, այլ նաև այն՝ շիտակութիւնից զուրկ վերաբերմունքը, որ ծնողներն ունեն դէպի կողմնակի անձինք, դէպի ուրիշների զաւակներն և տանու ծառաները:

Ականջ դրէք, թե ի՞նչպիսի խօսքեր, ի՞նչպիսի բառեր են արտասանում մեծերն երեխաների ներկայութեամբ, և այն ժամանակ կըհասկանաք, որքան անմեղ են սարկօրէն մեծերի օրինակին հետևող երեխաները: Մեզանից ո՞ւմ արդեօք չի պատահել ականատես լինել, ինչպէս հայրը զաւակների ներկայութեամբ յանդիմանում է մօրը կամ ընտանիքի միւս անդամներին տնային այլ և այլ զանցառութիւնների համար, կամ ինչպէս մայրը վիճում, կուում է ծառայի հետ, անպարկեշտ ածականներով մեծաբելով նրան: Ո՞վ վկայ չի եղել, երեխաների ներկայութեամբ, ընտանիքի հասակաւոր անդամների մէջ տեղի ունեցած կոիւններին, անախորժութիւններին ու փոխադարձ հայհոյանքին, որոնց շատ անգամ ուղեկցում են այնպիսի գործողութիւններ և արարքներ, որ ինքնին անվայել լինելուց զատ զգւելի օրինակ են տալիս երեխաներին: Է՛լ չենք խօսում մշտական ստախօսութեան, խաբեբայութեան և ամեն տեսակ խորամանկութիւնների ու նենգութիւնների մասին, որ առանց քաշելու թոյլ են տալիս իրենց՝ ընտանիքի անդամներն երեխաների ներկայութեամբ,—այդ բոլորը, ցաւօք սրտի, այնքան «սովորական է» դառել մի քանի ընտանիքներում, որ ոչոքի չի յուզում, ոչոքի չի վրդովում: Այս բոլորը լսում, տեսնում և ընդօրինակում են երեխաները, և յետագայում արդէն պատիժներ են կրում իրենց տգեղ արարքների համար: Հազարաւոր փաստերով կարելի էր ասպացուցանել մեծերի մեղաւոր լինելը երեխանե-

րի ոչ միայն վատ խօսքերի, այլ և վատ արարքների մէջ:

Նշանակալից է և այն, որ ծնողները երեխաներից միշտ պահանջում են աւելին, քան իրենք կարողանում են կատարել կամ իսկի չեն կատարում: Իրենք ուշ են պառկում քնելու, իսկ երեխաներից հակառակն են պահանջում, իրենք մշտապէս զւարճանում են այս կամ այն խաղով, իսկ երեխաներից պահանջում են պարապմունք և անընդհատ աշխատանք, իրենք կոպիտ ու անքաղաքավարի են, իսկ երեխաները, ընդհակառակը, պէտք է լինեն սիրալիւր և պարկեշտ և այլն: Մի խօսքով, ծնողների մեծագոյն մասը այլ է պահանջում իր զաւակներից և բոլորովին այլ բաների է ձգտում ինքը իր կեանքում: Երեխաներին առաջադրած պահանջների և սեփական գործողութիւնների մէջ եղած այս աններդաշնակութիւնն է, որ անհրաժեշտ է դարձնում պարզկենների և պատիժների գործադրութիւնն երեխաների դաստիարակութեան մէջ:

Որպէսզի մեր ընտանիքներից իսպառ վերացեն պատիժներն և պարզկենը, անհրաժեշտ է, որ նախապէս ուղղեն, դաստիարակեն իրենք ծնողները և հիմքից ոչնչանան այն բոլոր պատճառները, որոնք անխուսափելի են դարձնում պարզկենների և պատիժների գործադրութիւնը: Միթէ հնարաւոր է, հարց կըտան մեզ, որ, առանց բացառութեան բոլոր դէպքերում, երեխաների հետ այնպէս վարենք, որ նրանք ամեն ինչ կատարեն առանց պատիժների կամ պարզկենների: Ի հարկէ, կարելի է, կասենք մենք, միայն պէտք

է գիտենալ, ինչպէս անել այդ բոլորը:

Ծնողների համար տնտեսական աւելի մեծ դժուարութիւն է ներկայացնում դաստիարակութեան անպարզ և անպատիժ սիստեմը. այս սիստեմի համար նախ և առաջ պահանջուած է ծանօթ լինել մանկան բնութեան և նրա պէս-պէս կարիքների հետ: Այնուհետև, անհրաժեշտ է որ ծնողները և տոհմատէր կերպաներին շրջապատող բոլոր հասակաւորները բարեփոխեն իրենց յարաբերութիւններն երեխաների հետ և մանաւանդ մշտապէս, խիստ և անյողողող կերպով հետամուտ լինեն երեխաների ներկայութեամբ արտասանած իրենց խօսքերին և կատարած արարքներին: Ընտանիքի բոլոր անդամները (մանաւանդ հայրն և մայրը) պէտք է տողորած լինին այն համոզմունքով, թէ զաւակների հետ նոյն յարաբերութիւնը պիտի ունենան, ինչ որ կողմնակի անձերի հետ, նրանք պէտք է աշխատեն ոչ միայն առերես երևալ, այլ և իսկապէս միանգամայն բարեկիրթ ու սիրալիր, կանխանկար և մտերիմ բարեկամ լինել, ընկեր ու օգնական հանդիսանալ ամեն տեսակ ազնիւ գործերում և բարի ձեռնարկներում:

Մի դաստիարակչուհի կատարելապէս իրաւամբ նկատում է, որ «մեզանում չըզիտեն երեխաների հետ վարել, այդ անդիտութեան մէջ կարմիր թելի նման անցնում է զարեբի ընթացքում մեր մէջ մի ու արիւն դարձած սովորութիւնը—օտար անձնաւորութեան անարգանք, վիրաւորանք հասցնելը: Մեզանում չըզիտեն քաղաքավարի վարել երեխայի հետ, պատահում

է՝ գիպչում կամ հրում են երեխային, բայց ներողութիւն չեն խնդրում, ամեն մի յիմար բանի համար խանգարում են երեխայի պարապմունքը կամ խաղը, ընդհատում են կամ չեն լսում նրա խօսքը, երբ նա յափըշտակեալ պատմում է իրեն հետաքրքրող որ և է բանի մասին, չեն կատարում նրան տեաժ խոստումը և այլն և այլն, այս բոլորը շատ սովորական է դարձել արդէն: Երեխային խոնարհութիւն, հնազանդութիւն ներշնչելու խոր և կարևոր նկատումների տեսակէտով այդ բոլորը նոյնիսկ խիստ մանկավարժական քայլ է համարուած: Անհեթեթ, անմիտ պատմեալներով մոլորեցնել երեխաներին, միամտութեան շնորհիւ անախորժ դժբութեան մէջ ընկած երեխայի վրա խնդալ, գրգռել նրա ամենացաւոտ կողմը, խաղալ նրա զգացմունքների և սիրոյ հետ—այս բոլորը հիւանալի ժամանց է մեծերի համար»:

Մենք անվերջ կարող էինք թելել երեխաների հետ կոպիտ, անհամբոյր, յանդուգն և նոյն իսկ տմարդի վարելու դէպքերը, սակայն նրանք յայտնի են մեզանից իւրաքանչիւրին, և կարիք չըկայ մի առ մի յիշատակելու: Այստեղ միայն հարկաւոր է արձանատու գրել ամբողջ կեանքում անջնջելի մնացող այն գեղեցիկ տպաւորութիւնը, որ զաւակները ստանում են ծնողների և մեծերի բարեկամական ու միանգամայն մարդավայել վարողութիւնից: Եթէ ուշի ուշով կարդանք այն յարկանց մանկական յիշողութիւնները, որոնք յանձին իրենց հօրը կամ մօրը ունեցել են մի քաղցր բարեկամ, այս բառի ամենաճիշտ մտքով, այն ժամա-

նակ միայն կարող ենք, ըստ արժանւոյն գնահատել, թէ ինչ տեսել է կտտարելապէս բնական և լիովին մարդկային վերաբերմունքը դէպի մատաղ սերունդը:

Մի հեղինակ պատմում է, որ հայրը նրան «միշտ թւում էր լուրջ, բարեհամբոյր, սիրալիր և արգարամիտ, և նա ինձ այդպէս էր թւում ոչ միայն մանուկ, հասակումս, այլ նոյն իսկ մինչև օրս էլ... Նա երբէք կոխ, զալմաղալ չէր անում տնեցիների հետ, մի բան, որ շատ յաճախ թոյլ են տալիս իրենց հայրերը 11—12 տարեկան փոքրիկների ներկայութեամբ: «Ի՛հ, շատ են հասկանում», ասում են սովորաբար նրանք նման դէպքերում և սարսափելի փշացնում են երեխաներին: Փշացնում, անբարոյականացնում են նրանց սիրտը, որովհետև երեխան, երես առ երես դիպչելով կեանքի աղտ ու մուրի, այլանդակ, վայրենի գաղափար է կազմում մարդու ամենայտտակ, ամենասուրբ զգացումների մասին: Փշացնում, անբարոյականացնում են նրանց լսելիքը, որովհետև երեխան՝ յար և միշտ լսելով այն «ընտիր» դարձածները, որով մեծերը սիրում են համեմել իրանց խօսքը, այլ ևս չի ըմբռնում, թէ ի՞նչու վիրաւորանք կայ իւրաքանչիւր նման բառի մէջ: Փշացնում, անբարոյականացնում են մարդուս լուսագոյն զգացմունքները, որովհետև որդու կամ աղջկայ սրտում մեռնում, ոչնչանում են յարգանքի յետին նշոյլներն անգամ՝ դէպի այն հայրը, որ իր ներկայ լինելը ընտանիքում յայտնի է դարձնում անհատնում անախորժութիւններով և բռնակալական վարք ու բարքով:

Կարծում ենք, որ բացատրութիւնները միանգամայն աւելորդ են:

Ամփոփելով բոլոր ասածները, ակամային գալիս ենք այն եզրակացութեան, որ եթէ պարզենք և պատիժները ժամանակակից ընտանեկան դաստիարակութեան մէջ գործադրուում են լայն չափերով, ապա դրա մեղաւորութիւնը ընկնում է միայն ծնողների և դաստիարակների վրա, որոնք՝ չըմբռնելով երեխաների բնութիւնը, այնպիսի այլանդակ պայմանների մէջ են դնում նրանց, որ ուզեն չուզեն պէտք է դառնան (և դառնում են) պէսպէս թերութիւններով ճոխ և առատօրէն օժտւած էակներ:

IV

Բնական պարզների և պատիժների սխտեմը.

Կտրականապէս մերժելով պարզների և պատիժների գործադրման նպատակայարմարութիւնը երեխաների կրթութեան և դաստիարակութեան գործում, անպայման վնասակար գտնելով նրանց թողած ազդեցութիւնը մանկան ֆիզիքական, հոգեկան և բարոյական զարգացման ու առողջութեան վրա, քանի որ նրանք, այդ պարզները և պատիժները, ոչ միայն չեն վերացնում արատներն և գանազան տգեղ հակումները, այլ՝ ընդհակառակը, աւելի զարգացնում են ու խորացնում մենք, բնականաբար, դնում ենք հետևեալ հարցը, թէ՛

ծնողներն ի՞նչ պէտք է անեն, որպէսզի կարողանան երեխաների մէջ ոչնչացնել զանազան տգեղ արարքներ, գործողութիւններ, հակումներ, ձգտումներ և առհասարակ հոգեկան այլ և այլ թերութիւններ... Մի՞թէ երեխաներին պէտք է լիակատար աղատութիւն տալ, կըհարցնեն մեզ, մի՞թէ պէտք է թոյլ տալ, որ նրանք անեն ինչ ուզում են և ինչպէս ուզում են... Իսկ ծնողները, լուռ ու մունջ, հանդիսատես լինեն զաւակների գործած չարութիւններին ու արարքներին ու չըխառնւեն նրանց գործերին, ուրիշ խօսքով ասած, ծնողները չըպէտք է կրթեն իրենց զաւակներին, չըպէտք է հսկեն, ղեկավարեն նրանց գործողութիւններն ու արարքները... Ո՞րպիսի մոլորութիւն, պատժել, պարգևատրել, դաստիարակել, հսկել, ղեկավարել գաղափարների սրպիսի գոհնիկ խառնաշփոթութիւն կամ, աւելի ճիշտն ասած, նոյնացնում: Մենք պահանջում ենք, որ ծնողներն իրենց զաւակներին կրթեն, դաստիարակեն, բայց ոչ թէ պատժեն ու պարգևատրեն: Ծնողներն իրենց այդ պարտականութիւնը կարող են կատարել այն ժամանակ միայն, երբ զաւակներին խնամելիս ու հսկելիս կըղեկավարւեն ոչ թէ պատիժներով ու պարգևներով, այլ դաստիարակութեան «ընական մեթօդով», որ միանգամայն աւելորդ է դարձնում զրանց գործադրութիւնը:

Ի՞նչ է ներկայացնում իրենից դաստիարակութեան բնական մեթօդը:

Նրա ամենաջերմ պաշտպանն ու արծարծողը, ինչպէս յայտնի է, եղել են փիլիսոփայ-մտածողներ՝ Ժ. Ժ. Ռուսօն և Հ. Սպենսերը:

Իր կլասիք աշխատութեան մի տեղում *) Ժ. Ժ. Ռուսօն նկատում է, որ վաղուց ի վեր երեխաների դաստիարակութեան գործում ծնողներն առաջնորդել են հազար ու մի մեթօդով, սակայն աչքաթող են արել նրանցից ամենաթանկագինը՝ «երեխաներին խելացի կերպով ազատութիւն տալու մեթօդը»: Երեխաների դաստիարակութեան գործում Ժ. Ժ. Ռուսօն միանգամայն աւելորդ ու անօգուտ է գտնում իւրաքանչիւր մի խօսք, իւրաքանչիւր խրատ ու քարոզ: Երեխան, նրա կարծիքով, պէտք է մի որոշ կախումն ունենայ իրեն շրջապատող միջավայրից և փորձով ճանաչի նրան, զգալով, ճաշակելով իր արարքների և գործողութիւնների բոլոր հետեանքները: Եթէ քո «երես առած երեխան», ասում է Ռուսօն, ջարդ ու փշուր անի իր ունեցած բոլոր խաղալիքները, դու մի շտապիր փոխարէնն ուրիշը տալու, այլ թո՛ղ որ նա ճաշակի, տեսնի զրկանքի կսկիծը: Եթէ նա կտորել, փշրել է իր սենեակի ապակիները, մի շտապիր այն գցել տալու, այլ թո՛ղ որ քամին գիշեր-ցերեկ փչի, ներս ու դուրս անի նրա սենեակում. շատ էլ մի մտածիր, թէ կըմարսէ, փոյթ չէ, աւելի լաւ է մի փոքր մրսի, քան ամբողջ կեանքում անմիտ մնայ: Մի գանգատւիր այն բոլոր անհանգստութիւնների համար, որ նա զրանով կըպատճառի քեզ, բայց այնպէս վարւիր նրա հետ, որ նա ինքը զգայ այդ բոլոր անախորժութիւնները»:

*) Ժ. Ժ. Ռուսօն «Էմիլ կամ զաստիարակութեան մասին» կայ հայերէն թարգմանութիւն:

«Անն այն ընդհանուր ձևը կամ ֆորմուլը, որին մօտաւորապէս յանգում է երեխաների ժամանակակից անօրմալ դաստիարակութիւնը—»

«Ուսուցիչ.—Այդ չի կարելի անել: Առակներ.—Ի՞նչու չի կարելի: Ուսուցիչ.—Որովհետև տղեղ բան է: Առակներ.—Տղեղ բան է. ի՞նչ ասել է տղեղ: Ուսուցիչ.—Դա այն է, ինչ որ քեզ արգելում են անել: Առակներ.—Իսկ ի՞նչու տղեղ է այն, ինչ որ ինձ արգելում են: Ուսուցիչ.—Քեզ կը պատժեն անհնազանդութեան համար: Առակներ.—Իսկ ես կաշխատեմ, որ ոչ ոք չիմանայ արարքներս: Ուսուցիչ.—Քեզ հետամուտ կըլինեն: Առակներ.—Ես էլ կը թագնւեմ: Ուսուցիչ.—Կը բռնեն քեզ և հարց ու փորձի կենթարկեն: Առակներ.—Կը խաբեմ: Ուսուցիչ.—Չի կարելի խաբել: Առակներ.—Ի՞նչու չի կարելի խաբել: Ուսուցիչ.—Որովհետև դա տղեղ բան է, և այլն և այլն:

«Անն ձեզ կախարդական շրջագիծ: Եթէ աշխատէք դուրս գալ այդ շրջագծի սահմաններից և սկսէք բացատրել ու պարզել, երեխան չի հասկանայ ձեզ և, շատ պարզ է թէ ինչու—որոշ հասակի երեխաները չեն կարող ձանաչել չարն ու բարին, չեն կարող ըմբռնել մարդկային պարտականութիւնների հիմունքերը: Ի՞նչ արած, այդպէս է ստեղծել զբանց բնութիւնը. ախր մենք էլ եղել ենք երեխայ: Երեխայութիւնը, զգացմունքների և մտածմունքների աշխարհում, ունի իր առանձնայատկութիւնները, և կան շատ ու շատ բաներ, որոնք թէև միանգամայն պարզ են հասակաւորների համար, սակայն կատարելապէս անհասկանա-

լի են երեխաներին: «Թո՛ղ ուրեմն, այնուհետև շարունակում է Ժ. Ժ. Ռուսոսն, երեխաներին զսպի, սանձի ոչ թէ մեր արգելքը, այլ բնական խոչընդոտը, ոչ թէ պատճառների, առիթների հետևանքների մասին եղած մեր աւելորդաբանութիւնը, այլ համը անհրաժեշտութիւնը: Իսկ մենք գլխովին հակառակն ենք անում—մենք կամ երեխայի ուզածն ենք կատարում, կամ յանկարծ պահանջում ենք նրանից մեր ուզածն անել: Դեռ հազիւ հազ մի բան անող երեխան, արդէն հպատակում է, իսկ շատ անգամ նոյն իսկ պատժուում, առանց հասկանալու իր գործած յանցանքը և յաճախ նաև առանց որևէ յանցանք գործելու: Դրանով երեխայի սրտի մէջ առաջ ենք բերում կըքեր և յոյգեր, իսկ յետոյ այդ բոլորը վերագրում ենք նրա բնաւորութեանը և՛ չար ու անտանելի դարձնելով երեխային, զանգատուում ենք նրա «անտանելիութեան» վրա: Երեխայի յիշողութիւնը ծանրաբեռնուում է անթիւ ու անհամար խօսքերով, որոնց նա հասկանալ չի կարողանում, հազար ու մի առարկաների մտապատկերներով, որոնք նրան բնաւ հարկաւոր չեն: Եւ երբ կը քնքեր յուզելով նրա մէջ խեղդում ենք ինչ որ բնական է, այնուհետև այդ արհեստական արարածը յանձնում ենք դաստիարակի (ուսումնարանում), որը վերջացնում, աւարտում է արհեստական սաղմերի զարգացումը ու երեխային սովորեցնում է ամեն բան, բացի իր սեփական եսը ձանաչելուց, բացի ապրել իմանալուց, բացի երջանիկ լինելուց... Հազար անգամ լաւ է, երբ երեխան իրեն գլխի տէրն է և իր

սեփական կամքն ունի: Իսկ մեղանում, ընդհակառակը, երեխան կառավարում է ոչ թէ իր ձեռքով, այլ մի շարք այնպիսի միջոցներով, որպէս են՝ մրցումը, նախանձը, փառասիրութիւնը, պատւասիրութիւնը, ագահութիւնը (սրանք բոլորն էլ պարզկենցիկ արդիւնք են, կասենք մենք), վախկոտութիւնը և այլն (պատիժների, կրքերի արդիւնք): Երեխայի ուղեղին որևէ գիտութիւն տւող դասի հետ, մենք նրա սրտում անպատճառ անկում ենք և մի որևէ արատ: Անմիտ ուսուցիչներ, դուք էիք, որ նրան գաղափար տւիք բարիի մասին և հէնց դուք էք, որ չարով այրանդակում էք նրան անաղարտ հոգին»...

Ժ. Ժ. Ռուսսոյի աշխատութիւնից առաջ բերած այս փոքրիկ քաղածքը բաւական է, որպէսզի պարզւի, թէ իսկապէս ինչու՞ն է կայանում դաստիարակութեան բնական մեթոդը. դա կայանում է նրանում, որ երեխան անգաղար ծանօթանում է իր գործողութիւններից բխող անխուսափելի հետևանքների հետ: Այս ղէպքու՞ն էլ հրեխան իր գործողութիւնների և արարքների համար ստանում է պարզկենցիկ ու պատիժներ, սակայն այդ պատիժները ոչ թէ նրան արհեստականօրէն պատճառած մի ցաւ են, այլ երեխայի անձնական գործունէութեան անխուսափելի, բնական հակագործողութիւն են ներկայացնում. նոյնպէս և պարզկենցիկը, — նրանք արդիւնք չեն հասակաւորների հաճոյքի ու կամայականութեան, այլ միանգամայն նօրմալ հետևանք են երեխայի սեփական վարք ու բարքի: Բնական պատիժների արժանաւորութիւնը հէնց նրա մէջն

է կայանում, որ այստեղ երեխան երբեք էւ ոչ մի դեպքում պատիժը չի համարում մեծերի անբարեացակամութեան ու կամայականութեան արդիւնք, այլ ընդունում է, իբրև մի անխուսափելի բան, որ, առանց բացառութեան, իր գործողութեան փոխարէն ստանում է ամեն մի մարդ: Ինչպէս մենք արդէն տեսանք, երեխան շատ անգամ դաստիարակի տւած պատիժների վրա նայում է, իբրև վրէժի ու պատժի վրա, որից կարելի է և խոյս տալ, իսկ ընտելեան տւած պատիժների վրա նա նայում է, իբրև իր սեփական գործողութիւնների հետևանքի, իբրև իր սեփական ձեռքով առաջացրած երևոյթի վրա, որի համար նա, բացի իր անձից, ոչ ոքի չի կարող մեղադրել: Հասկանալի է ի հարկէ, որ առաջին տեսակ պատիժները երեխային կարող են միայն աւելի գրգռել, աւելի կատաղեցնել, ուրիշ խօսքով սասած, նրան կը գրգռեն մեծերի դէմ, մինչգեռ երկրորդ տեսակ պատիժները նրան կամաց-կամաց կը ծանօթացնեն սեփական գործողութիւնների բնական հետևանքների հետ: Առաջին տեսակը պարզապէս ներկայացնում է պատիժ, իսկ երկրորդ տեսակը երեխայի գործած արարքների անախորժ հետևանքներ են միայն:

Դաստիարակութեան բնական մեթոդի գաղափարը անհամեմատ աւելի մանրամասնօրէն, և աւելի հիմնաւորապէս մշակել է Հերբերտ Սպենսէրը ¹⁾: Այն հարցին, թէ ի՞նչ ուղիով պէտք է ընթանայ երեխայի կըր-

¹⁾ Հերբ. Սպենսէր. «Ծննդի բնական, մտաւոր և բարոյական դաստիարակութեան մասին»: Կայ հայերէն թարգմանութիւն:

թուփիւնը, Սպենսէրը պատասխանում է. «Տարէք այն ուղիով, որ ցոյց է տալիս ինքը կեանքը»: Ո՞րն է այդ ուղին: «Դա այն ուղին է, ասում է Սպենսէրը, «որտեղ իւրաքանչիւր մի արարք ունի իր որոշ անխուսափելի հետևանքը. այդ ուղին ենք անցել մենք ամենքս: Երբ մեր ունեցած փողերը տալիս ենք յիմար բաների, մենք պատժուում ենք՝ զրկւելով այն անհրաժեշտ առարկաներից, որոնց համար ետ էինք զցել փողերը: Անդգուշութեան համար մենք վարձատրուում ենք հիւանդութիւններով ու դիւրագրգռութեամբ, իսկ ծանր բնաւորութեամբը վանում ենք մեզանից մեր բարեկամներին: Խիստ դիւրահաւատ պարտատէրը կորցնում է իր փողերը. որ և է կարեւոր բան նորոգելու համար տասնեակ բուրլիններ զլացող ժլատը՝ վերջը հարկւններ է ծախսում»: «Կեանքի փորձը այն դպրոցն է, որով անցնում է մեզանից իւրաքանչիւրը, և յաճախ թանկ շատ թանկ են նստում այդ դպրոցի դասերը. «զուր չէ, որ փորձ բառին կցում են դառն մակդիրը, ասում է Սպենսէրը, երեխաներին ապագայում հէնց այդ դառն փորձերից ազատելու համար հարկաւոր է նրանց այժմեկ իսկ փորձական նանապարհով դաստիարակել: Նրբ նրանք գործում են որեւէ արարք, բոլ որ ենքարկեւն այդ արարքի բոլոր անխուսափելի հետևանքներին»: Հերբերտ Սպենսէրը իր այս միտքը հաստատում է երեխաների կեանքից ու գործունէութիւնից վերջրած հետևեալ օրինակներով:

Ասինք, թէ երեխան ցաք ու ցրիւ է տւել իր խաղալիքները, կամ թէ տակն ու վրա է արել ամ-

բողջ սենեակը: Փոխանակ նրա գլխին երկար ու բարակ խրատներ՝ ու յանդիմանութեան աւետարան կարդալու, պէտք է ստիպել նրան ամեն բան դնել իր նախկին տեղը և հանդարտ, անյողողող պահանջել, որ նա այդ կատարել, եթէ նոյն իսկ այդ բոլորին նրան գրաւելիս լինի իր սիրելի խաղը կամ զարճութիւնը: Եթէ երեխան անհոգ է գտնւել և իր ժամանակին չի վճուել խնդիրը, թող նա զբա վրա գործադրէ իր ազատ ժամանակը, թէկուզ դրանով նա զրկւի վաղուց ծրագրւած զբօսանքից կամ ճամբորդութիւնից: Այս բոլորը պէտք է կատարել առանց սպառնանքի, առանց բացատրութիւնների, թէ զործդ չըկատարելու համար մեկ քեզ թողնում ենք տանը: Ընդհակառակը, երեխան պէտք է զգայ, որ ոչ թէ ուրիշն է իրեն թողել, այլ հէնց ինքը: Պէտք է ասել պարզ և կտրուկ. եթէ պատրաստ ես, գնանք, իսկ եթէ պատրաստ չես, մենք չենք կարող քեզ սպասել: Վերցնենք մի ուրիշ օրինակ. — հայրը իր որդուն դանակ է տւել, և նա կորցրել է. տգէտ հայրը կամ ազգականը, երեխային երկար ու բարակ կշտամբելուց յետոյ, սովորաբար, առնում է մի ուրիշ դանակ: Երեխան փշայնում, պատռում է նրան իսկոյն կարում են նորը, նախօրօք հագուստը, նրան խնայն կարում են նորը, նախօրօք անկիւնում կանգնեցնելով, ի հարկէ: Սակայն ինչ կազ կայ պատռած շորի և անկիւնում կանգնելու, կամ կորցրած դանակի և կշտամբանքի մէջ: Հագուստը փշայնող երեխան թող մի երկու օր տանը մնայ. թող նրա հագուստի վրա ծախուեն խաղալիքների կամ նրա այլ սիրելի բաների համար պահւած փողերը: Փոյթ

չէ, թող հայրը ասի նրան. «Ձաւակս, ես չեմ կարող քեզ վրա այդչափ ծախսել, անարդարացի կըլինի, եթէ քո պատճառով մի ուրիշը զրկանք կրի. դու ինքդ պէտք է տուժես քո անզգուշութեան և անհոգութեան համար»... Բնական դաստիարակութեան այսպիսի մեթոդի ժամանակ, երեխան սովորում է իրերը գնահատել այն զրկանքների չափով, որ նա կրում է իրերի փշանալուց, կոտրւելուց, այստեղ արդէն նա ըմբռնում է իր արարքի և նրա հետևանքի մէջ կղամ կապը:

Հասկանալի է ինքնըստինքեան, որ դաստիարակութեան բնական մեթոդի ժամանակ գոյութիւն չունի թողութիւն խնդրելը կամ «այսուհետև խելօք կըլինիմ» խոստումը, որովհետև պատիժը այստեղ արդիւնք է ոչ թէ ծնողների կամքի ու հաճոյքի, այլ պարզապէս և բնականաբար բղխում է երեխայի գործողութիւններից ու արարքներից:

Ընդհանուր գծերով սրանք են Հերբերտ Սպենսէրի դաստիարակութեան բնական մեթոդի հիմունքերը, որ կատարելապէս համաձայն են Ժ. Ժ. Ռուսսօյի յայտնած մտքերին:

Սխալ է ենթադրել, թէ դաստիարակութեան բնական մեթոդը միշտ շողկուպեւած է այս կամ այն ֆիզիքական տանջանքի հետ. ընդհակառակը, շատ յաճախ արատների և արարքների ուղղւելը երեխաների կեանքում կատարւում է բարոյական տանջանքների փորձով, այսպէս ասած, խղճի խայթով: Դա, անկասկած, մի ուրոյն պատիժ է, միանգամայն բնական և նոյնչափ անախորժ (եթէ աւելին չասենք), որչափ ֆիզիքական

ցաւերը, կորուստները, առարկաներ փշացնելը և զրւարճութիւններից զրկւելը:

Հսենք Հենրիկ Շուբէրտին, որ պատմում է, թէ սոսխոս երեխան ինչպէս է ուղղւել դաստիարակութեան բնական մեթոդի շնորհիւ:—

«Վեց ամսեկան հասակումս, մի օր, երբ կանգնած էի իմ հայրենի քաղաքի եկեղեցու պարսպի մօտ, ինձ շրջապատեց զւարթադէմ տղաների մի խումբ «Հենրիկ, գնանք նարգիզներ քաղելու» կանչելով: Ես, շարունակում է Շուբերտը, էլ խնդրել չըտուի և միացայ խմբին: Մենք անցնում էինք մի պարտէզից՝ միւսը և, վերջապէս, ցանկապատի վրայով թռանք չըւան պատրաստողի պարտէզը, որտեղ խնձորենիների միջև ծաղկել, փթթել էին բազմաթիւ չընաղ նարգիզներ: Ես այնչափ ծաղիկներ քաղեցի, որ հտղիւ հազ կարողացայ տուն տանել: Հայրս նստած էր սենեակում և գիրք էր կարդում: Ես ծաղիկները թափեցի անկիւնում դրած փոքրիկ սեղանի վրա: Հայրս, նկատելով ինձ, կանչեց. «Հենրիկ, արի մօտս»: Ես մօտեցայ:—Ո՞րտեղից ես քաղել այդ նարգիզները, հարցրեց նա: Ես լռեցի և ամօթից կարմրեցի: Վերջապէս, կակաղելով հաղիւ կարողացայ թոթովել, «մեր պարտէզից...»—Մեր պարտէզումը նարգիզներ չըկան, լուրջ առարկեց հայրս: Ո՞րտեղից ես բերել այդ:—Ես խոստովանեցի:—Ս,յս ինչ մարդու պարտէզի նարգիզները, ասաց հայրս, պատկանում են նրան և ոչ թէ քեզ. ուրեմն ի՞նչ արիւր դու, երբ թաքուն քաղեցիր այն:—Ես ստուսեցի այդ հարցից և կմկմացնելով արտասանեցի՝»

գողացայ»։—Իսկ երբ ինձ ասացիր, շարունակեց հայրս, թէ քաղել ես պարտէզում, մի փոքր յետոյ էլ, թէ ըստացել ես հարեանից, քնչ արիր։—«Ստեցի»։—Այն ժամանակ հայրս ասաց ինձ. «Հենրիկ, դու սուտ խօսեցիր քեզ անքան սիրող հօրդ առաջ, դու սուտ խօսեցիր ամեն բան տեսնող Աստու առաջ, այդ պատճառով պառկելիս այսպէս կաղօթես՝ Տէր Աստուծ, ես մեծ մեղք գործեցի, գողութիւն արի և խաբեցի հօրս»։— Ես դառն արտասուում էի։

«Այս դէպքը, շարունակում է նոյն հեղինակը, երկար ժամանակ վառ մնաց հոգուս մէջ. այն օրից ի վեր ինձ այլևս չէին կարող դայթակղեցնել ընկերներս, և ես երբէք չէի համարձակուում խաբել հօրս»։

Վերոյիշեալ օրինակում բարոյական-հոգեկան տանջանքը կամ, աւելի ճիշտն ասած, ցաւը այն աստիճան ազդեց Հենրիկ Շուբերտի հոգու վրայ, որ նա իր ամբողջ կեանքում այլևս չէր համարձակուում խաբել իր հօրը։ Ներքին տանջանք կրելով և արժանի պատիժ ստանալով, նա բոլորովին ազատեց իր տգեղ սովորութիւնից։ Այս օրինակը միանգամայն յարմար է գալիս այն դէպքի, երբ պատուտած հագուստը զրկում է երեխային՝ խաղերին մասնակցելու հնարաւորութիւնից, կամ երբ երեխայի պոկած կճանը կճում է չարածի ձեռքերը։ Այդ բոլոր դէպքերում երեխան ճաշակում է իր գործողութիւնների և արարքների տւած պտուղները, նա հնձում է իր ցանածը, այն դանազանութեամբ միայն, որ կճանի ժամանակ հետեանքը լինում է անմիջապէս, իսկ միւս դէպքերում՝ երրորդ

անձի միջնորդութեամբ, որը երեխային զգալ է տալիս ներքին հոգեկան անախորժ զգացմունք կամ խղճի խայթ, իբրև բնական պատիժ իր արարքների համար։

Դաստիարակութեան բնական մեթօդը, կառարկեն մեզ, եթէ խիստ հետևողութեամբ գործադրելու լինենք, այն ժամանակ երեխայի կեանքում կարող են տեղի ունենալ այնպիսի դէպքեր, երբ նրա սեփական արարքներից և գործողութիւններից առաջացած հետեանքները կը մնասեն երեխայի առողջութեան և վտանգ կսպառնան նրա կեանքին։ Կարելի է, ի հարկէ, բազմաթիւ օրինակներ բերել, երբ դաստիարակը հարկադրւած է լինում բռնութեան դիմելու և երեխային գործողութիւնների ազատութիւնից զրկելու։ Այստեղից պարզ է, որ դաստիարակութեան բնական մեթօդը հնարաւոր է միայն այն դէպքում, երբ երեխային շրջապատող միջավայրը ներդաշնակ ու համապատասխան է նրա օրգանիզմի ոյժերին։ Հէնց ինքը Սպենսէրը զգաց, որ դաստիարակութեան բնական մեթօդը գործադրելիս հարկաւոր է մտցնել վերոյիշեալ ուղղումը, սակայն այդ հարցը աւելի մանրամասնօրէն արծարծեցին Սպենսէրի քննադատները և, մանաւանդ, ոուս պրօֆէսօր Մէչնիկովը, որը առանձնապէս շեշտում էր, թէ անհրաժեշտ է միջավայրը մշտական ներդաշնակութեան մէջ պահել երեխաների ոյժերի և մտաւոր զարգացման հետ, թէ այդտեղ հնարաւոր ու թոյլատրելի են նաև այնպիսի դէպքեր, երբ դաստիարակը ստիպւած է բռնի միջոցների դիմելու։ «Ենթադրենք, ասում է պրօֆէսօր Մէչնիկովը, որ երեխան պարտէզում տեսնում է կար-

միւր, թունաւոր պտուղներ: Այդ գրաւիչ պտուղների տեսքը նրա մէջ առաջ է բերում ուտելու ցանկութիւն: Նա վարւում է լիովին բնականաբար, երբ փորձում է պտուղները քաղել և բերան դնել. նրա ամբողջ օրգանիզմի մէջ չըկայ մի ոյժ, որ ետ մղէր հրեխայի այդ բունն ձգտումը—պտուղների տեսքը ոչ թէ անհաճոյ է նրան, այլ հաճելի... «Ակներև է, շարունակում է պրօֆէսօրը, որ այստեղ մենք տեսնում ենք հրեխայի ու ժերի ու հասկացողութիւնների աններդաշնակութեան մի օրինակ նրան շրջապատող միջավայրի հետ. նրանց մի որոշ ներդաշնակութեան բերելու համար հարկաւոր է մի միջնորդ, մի հասակաւոր մարդ. դաստիարակը պարտաւոր է հրեխային հասկացնել, որ փոստակար են այդ պտուղները և չի կարելի նրանց ուտել: Երեխան, ըստ մեծի մասին, չի համաձայնի այդ պատճառաբանութեանը, որովհետև, նրա կարծիքով, ինչոր քողցը է ու գեղեցիկ, նա միաժամանակ և գործածելի է: Դաստիարակը պէտք է դիմի բռնութեան, այսինքն՝ կամ պէտք է պտուղները խլի, կամ երեխային այդ տեղից հեռացնի»: Այս տեսակ ուղղումը բնաւ չի նւաստացնում բուն մեթօդի արժանաւորութիւնը: Եթէ երեխայի կեանքում կարող են տեղի ունենալ այնպիսի դէպքեր, ուր հասակաւորների միջամտութիւնն անպայման պէտք է թողաւորէ, անգամ կոպիտ բռնութեան ձևով, յօգուտ երեխաների առողջութեան ու կեանքի պահպանման, ապա, միև կողմից, պակաս չեն և այնպիսի դէպքեր, երբ երեխան անմիջապէս, փորձով կարող է հասկանալ, գնահատել իր գործողութիւնների ու արարքների

հետևանքը: Բացի դրանից, պրօֆէսօր Մէչնիկովի առաջ բերած օրինակը այնպիսիներից է, որ եթէ մի հասակաւոր մարդ ցանկանար նոյնն անել, այն ժամանակ միև հասակաւորների բարոյական պարտքը պիտի լինէր խլել պտուղները նրա ձեռքից և թոյլ չըտալ ուտելու. իսկ հակառակ դէպքում, եթէ ուտել ցանկացողը յամաւէր, նմանապէս հարկաւոր կըլինէր կամ հեռացնել հրապոյրից, կամ ոչնչացնել պտուղները: Այս ձևի բռնութիւնը միանգամայն օրինաւոր է և խելացի, որովհետև ներկայ դէպքում մենք գործ ունենք կամ տգիտութեան, կամ այնպիսի ա՛ ճնաւորութեան հետ, որի լաւագոյն տեղը գժանոցն է:

Դաստիարակութեան բնական մեթօդի գործադրման մէջ պրօֆ. Մէչնիկովի շեշտած խիստ էական և կարևոր պայմանը մի ուրիշ նշանակութիւն էլ ունի. նա ցոյց է տալիս, որ անհրաժեշտ է ոչ միայն արդէն առաջացած վտանգի առաջն անել, այլ և զգուշանալ գալիք վտանգից: Այս վերջին նպատակին հասնելու համար՝ մտաւոր զարգացման մէջ՝ հարկաւոր է գիտութիւնների ձեռք բերել, իսկ գործողութիւնների ու արարքների մէջ—ազնիւ սովորութիւններ ու հակումներ զարգացնել: Վերջիններիս ուժը, Շէքսպիրի ասելով, «գլխի նման հրէշաւոր է, բայց, միևնոյն ժամանակ, հրեշտակի պէս՝ հոգեպարար»:

Ներկայ գրքոյկի մէջ մենք աշխատեցինք ցոյց տալ, որ դաստիարակութեան ժամանակ գործադրող պարզներն և պատիժները ոչ միայն լիովին անպէտք

են, այլ և միանգամայն փլասակար երեխայի կեանքի, առողջութեան և մտաւոր ու բարոյական զարգացման համար: Եթէ մենք կարողացանք կասկածի գէթ մի փոքր կայծ ձգել ընթերցողի հոգու մէջ պարզկենցիկի և պատիժների վրա հիմնւած դաստիարակութեան անպէտք ու փլասակար լինելու նկատմամբ, այն ժամանակ ուրախութեամբ կասենք, որ մեր աշխատանքը կորած չէ. կասկածը առաջին քայլն է դէպի ճշմարտութիւնը... Այնուհետև արդէն որդեսէր ծնողներին ինքը կեանքը կը թելադրի, թէ սրբան նպատակայարմար է դաստիարակութեան ընական մեթոդի գործադրութիւնը թէ երեխաների և թէ ծնողների համար:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

I.	Ընդհանրապէս պարզկենցիկի և պատիժներից առաջացած փլասակար հետեւանքներն դաստիարակութեան մէջ .	3—12
II.	Չանազան տեսակ պարզկենցիկի և պատիժների փլասակար հետեւանքերը .	13—26
III.	Պարզկենցիկի և պատիժների լայն գործադրութեան պատճառները ընթացիկան դաստիարակութեան մէջ .	26—39
IV.	Բնական պարզկենցիկի և պատիժների սխտեմը .	39—54

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես	սույ	սպւած է	պէտք է լինի
11	1 վ.	պարգևները	պարգևներ
»	7 ն.	անել	ատել
13	9 ն.	օրգանիզմին	օրգանիզմի
14	8 ն.	կախւած են	կախւած է
17	3 ն.	աւելի	աւելորդ
18	7 վ.	նւազած	նւազած
»	12 ն.	տեղի	այլ տեղի
»	7 ն.	ծանրաբեռները և այդ	ծանրաբեռներով. իսկ այդ
19	11 վ.	նախատրամադրող այս	նախատրամադրող
»	12 վ.	առաջինը	առաջինը այս
»	7 ն.	հագուստեղէն կախարանից	հագուստեղէնի կախարանից
21	8 ն.	ոչ ամօթն	ոչ թէ ամօթն
»	4 ն.	Պաշմերստօնների	Պաշմերստօնների
28	13 ն.	յարգանք	յարգանքը
30	1 վ.	թոցրում է	թոցնում է
»	13 վ.	կնկնում է	կրկնում է
»	1 ն.	պակասութիւն- ներին	պակասու- թիւններն
32	1 վ.	դաստիարակչու- հիներ	դաստիարակչու- հիների
»	7 ն.	ծվողներին	ծնողներին
»	»	պարգևներին պա- տիժներին և պատիժներին...	պարգևներին և պատիժներին...

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

«Ազգային գրադարան»



NL0225506

44.774